

## ՇԱՊԱՆ. «ԹՈՒՐԷԻԱ ՍՏԻՊՈՂԱԲԱՐ ՊԻՏԻ ԶԵՌԱՆԱՅ ՍՈՒՐԻԱԿԱՆ ՀՈՂԵՐԷՆ»

Ուրբաթ, 31 Օգոստոս 2019-ին, Սուրիոյ նախագահութեան լրատուական եւ քաղաքական խորհրդատու Պուսայնա Շաապան լիբանանեան «Մալաթի» պատկերասփիւռային կայանին հետ ունեցած հարցազրոյցին ընթացքին շեշտեց, որ Իտլիպի մէջ գինադադարի որոշումը ժամանակաւոր է եւ կը ծառայէ Սուրիոյ իւրաքանչիւր մղոնի ազատագրման ռազմավարութեան: Շաապան դիտել տուաւ, որ թուրք-ռուսական համաձայնութեան հիմքը կը կազմէ Սուրիոյ գերիշխանութիւնն ու տարածքային ամբողջականութիւնը, իսկ գինադադարը ռուս-սուրիական որոշում էր, որեւէ առնչութիւն չունի այլ համաձայնութիւններու հետ:

Պատասխանելով թուրքիոյ նախագահին, Շաապան մեջբերեց հետեւեալ ժողովրդային խօսքը. «*Չուրը երեւան կը հանէ լողորդին սուտը*», անելցնելով, որ Երտողան ախորժակներ ունի Իրաքի եւ Սուրիոյ հողերուն նկատմամբ եւ յարաբերութիւններ՝ տեղւոյն գինեալ ահաբեկական խմբաւորումներուն հետ: Շաապան հաստատեց, որ թրքական բանակը ստիպողաբար պիտի հեռանայ սուրիական հողերէն: Այս պարագայէ, որ սուրիական կողմը ռուս-թրքական համաձայնութեան



ոչ մէկ միջամտութիւն կատարած է, որովհետեւ Թուրքիան վստահելի չէ եւ պարկեշտ վերաբերմունք չի ցուցաբերել լարուածութեան մեղմացման գօտիներուն գծով:

Շաապան յայտնեց, որ Սուրիոյ նախագահ Պաշշարալ Ասատի հեռանկարը սուրիական ամբողջ հողերուն ազատագրումն է: Այս դիտել տուաւ, որ Սուրիոյ տարածքային ամբողջականութիւնը պիտի վերահաստատուի ամէն գնով, իսկ սահմանադրական յանձնախումբին մասին ցարդ վերջնական որոշում չէ գոյացած:

Անդրադառնալով Լիբանանի ապահովութեան, Շաապան ըսաւ. «*Լիբանան բարեկամ երկիր է, Սուրիա եւ Լիբանան մէկ երկիր կը համարուին: Սուրիան ազգային դիմադրութեան մայրաքաղաքն ու վերնագիրն է, հետեւաբար առնչուած է Լիբանանի հարցերուն, այնպէս ինչպէս Իրաքի: Սուրիան տարածաշրջանի դիմադրութեան առանցքին անբաժանելի մասն է, իսկ սուրիական բանակին դիմադրութիւնն ու մարտնչումները նպաստեցին այս առանցքին ամրապնդման*»:

## ԱՐՃԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱՍՈՒԹԵԱՆ ՏՈՆԻՆ ԱՌԻԹՈՎ ՀՅՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆԻ ԸՆՈՐՀԱՌՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶԸ

Քսանութ տարի առաջ՝ 2 Սեպտեմբեր 1991-ին, ատրպէյճանական գիւնուժի ղրաղորդ յարձակումներուն եւ հրետակոծութիւններուն ներքոյ Ստեփանակերտի մէջ տեղի ունեցաւ պատգամաւորներու մարգային եւ Շահումեանի շրջանային խորհուրդի միատեղ նստաշրջանը:

Պատմական այդ նստաշրջանը հայ ժողովուրդի ազգային ազատագրական պայքարի հերթական փուլի եզրափակումն էր եւ, միեւնոյն ժամանակ, որակապէս ու բովանդակութեամբ սոր փուլի սկիզբը: Նստաշրջանն ընդունեց «Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հռչակման մասին» հռչակագիրը՝ այդպիսով ի լուր աշխարհի ազդարարելով հայկական երկրորդ պետականութեան ծնունդը:



ԼՂՀ անկախութեան հռչակագիրը ոչ միայն եկաւ հաստատելու, որ ԼՂՀ հայ բնակչութիւնը չի հանդուրժեր իր մարդկային եւ ազգային արժանապատուութեան նկատմամբ որեւէ ոտնահարում, այլեւ իր քաղաքական իրաւունքներուն տերն է եւ ունի կամք ու վճռականութիւն՝ իւրացնելու զանոնք: Յառաջիկային Հայոց երկրորդ պետականութեան ձեւաւորման դժուար, բայց ինքնավստահ եւ աննահանջ քայլերն էին:

Նոյն թուականի 10 Դեկտեմբերին տեղի ունեցած հանրաքուէն՝ մասնակիցներու 99%-ի վճռական համոզումով, հաստատեց Լեռնային Ղարաբաղի անկախութիւնը: Հանրաքուէին հետեւած խորհրդարանական ընտրութիւններուն ընտրուեցաւ ԼՂՀ խորհրդարանը, որ կազմեց առաջին կառավարութիւնը:

Արցախի Հանրապետութիւնը այսօր քսանութ տարեկան է. յամառ պետականաշինութեան, նուիրումի, գոհաբերութիւններու, ձեռքբերումներու, շարունակուող պայքարի ու կերտումի քսանութ տարիներ:

Անկախութիւնն ու ինքնիշխանութիւնը անսակարկելի արժեքներ են: Որքան ալ թանկ ըլլայ այդ գինը, նահանջ չկայ. սա է մեր սրբագան սահմանները պահող հայ գինուորին համոզումն ու ուխտը, սա ամբողջ հայ ժողովուրդին համոզումն է, մեզ՝ համայն հայութեան միացնող անքննելի գաղափարը:

Արցախը շարունակելու է մնալ մեր համահայկական օրակարգերուն առաջնահերթութիւնը, մեր համազգային նուիրումին ճակատը՝ ամրագրելու անոր գարգացումն ու արդար դատը:

Շնորհաւոր Արցախի եւ համայն հայութեան տօնը, հայկական երկրորդ պետականութեան անկախութեան տօնը:

**ՀՅՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆ**  
 2 Սեպտեմբեր 2019

## ՄԵԾՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՀռԵՍԿՈՒԻԻ 100-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ՆԵՆՍԳՅՆ ԱՌԻՆ ՀԱՅՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՐ ԲՈՒԿԵՆՆԵՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹՈՒՐԷԻԱ

Մեծն Լիբանանի հռչակումի 100-ամեակի տօնակատարութեանց մեկնարկին առիթով՝ հանրապետութեան նախագահ գօր. Միշել Աուն Շաբաթ, 31 Օգոստոս 2019-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, լիբանանեան լսատեսողական լրատուամիջոցներուն ընդմէջէն պատկերասփռուած պատգամ մը ուղղեց լիբանանցիներուն:

Իր խօսքին մէջ նախագահ Աուն շեշտեց, որ իրենք Մեծն Լիբանանը կը փափաքին ունենալ յառաջիկայ հարիւրամեակին, եւ ինչու չէ նաեւ յառաջիկայ հազարամեակին եւս, որովհետեւ անկազ ազատութիւններու եւ քաղաքակրթութիւններու, ժողովրդավարութեան, բազմազանութեան, նորարարութեան, ինչպէս նաեւ հատաքի եւ աւանդներու հայրենիքն է:

Նախագահ Աուն ընդգծեց, որ 1516-1918՝



չորս դար եւ երկու տարիներու ընթացքին, Լեռնալիբանանը ապրեցաւ Օսմանեան Կայսրութեան տիրապետութեան տակ, եւ հակառակ իրենց ապրած որոշ ինքնավարութեան, լիբանանցիք տառապեցան, որովհետեւ օսմանեան վարչական բաժանումներուն պատճառով փոփոխութեան ենթարկուեցաւ Լեռնալիբանանի աշխարհագրական տարածութիւնը, մինչ Լիբանանի միւս շրջանները անջատուեցան եւ ենթակայ մագին օսմանեան ուղղակի տիրապետութեան:

Ան հաստատեց, որ օսմանեան իշխանութեան ճիրաններէն ազատագրուելու իւրաքանչիւր փորձի դիմաց կ'արձանագրուէին բռնարարքներ, վայրագութիւն, ոճիր, ինչպէս նաեւ համայնքային սադրանքներ: «*Օսմանեան Կայսրութեան կողմէ լիբանանցիներուն դէմ գործուած պետական ահաբեկութիւնը, յատկապէս*

Շար.՝ էջ 14

### Խմբագրական

## ՊԱՀՊԱՆԵԼ ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՄԱԳԻՇԸ

Վերամուտի շտաբի անդամները և կողմնակիցները կողմնակապ են արտահայտում մեր կատարել պատերազմը տակալ դուրս եկող սուրիահայ վարժարաններու ներկայ վիճակին, կարիքներուն, առաւելութիւններուն եւ դիմագրաւած դժուարութիւններուն:

Անհրաժեշտ է արդարօրէն հաստատել, որ պատերազմի տարիներուն սուրիահայ բոլոր վարժարանները իրենց դռները բաց պահեցին հայ աշակերտին դիմաց, հակառակ ապահովական, նիւթական, կենցաղային բազմապիսի դժուարութիւններու: Ազգային իշխանութիւնը, միութիւններն ու յարանուանութիւնները ամէն ջանք ի գործ դրին, որ հայ պատանին ու երիտասարդը տնտեսական դժուարութիւններու բերումով դուրս չմնայ հայ դպրոցէն: Այլ խօսքով՝ տնտեսական եւ ապահովական դժուարութիւնները յաղթահարեցին, միեւնոյն ատեն պահպանելով հայկական վարժարաններու ուսումնական բարձր մակարդակը:

Պատերազմին հետեւանքով, սակայն, յառաջացան այլ դժուարութիւններ, որոնք երբեմն համապատասխան ծրագրաւորումի եւ աշխատանքի բացակայութեան հետեւանքով անյաղթահարելի մնացին:

Գաղթի բերումով, հայկական վարժարաններու աշակերտութեան թիւը կտրուկ անկում արձանագրեց, անկում արձանագրեց նաեւ փորձառու կրթական մշակներուն, յատկապէս հայերէնաւանդ ուսուցիչներուն թիւը: Կարիքներուն համաձայն նորեր ալ չպատրաստուեցան...: Մենք մեր իւրով տապկուելու քաղաքականութիւն մը վարեցինք, որ ժամանակավրէպ սկսաւ դառնալ:

Ներկայ տուեալներով Սուրիոյ մէջ կը գործեն 27 հայկական վարժարաններ: Կարգ մը վարժարաններ աշակերտութեան թիւը բարձրացնելու համար իրենց դռները բացին՝ նաեւ օտար աշակերտներու դիմաց, առանց նկատի առնելու այդ քայլին բացասական հետեւանքները՝ ընկերային, դաստիարակչական հարցեր, հայախօսութեան անկում, հայերէնի դասապահերուն հանդէպ անտարբերութեան աճ եւ այլն:

Ներկայիս կարգ մը դպրոցներու օտար աշակերտներուն թիւը կը գերազանցէ հայերունը: Ոմանք պիտի արդարացնեն այս արարքը, դիտել տալով, որ դպրոց պահելու համար պետական պայմաններուն համապատասխան աշակերտութեան թիւ պետք է ունենալ: Զայ դպրոցը չի կրնար կաշկանդուիլ սոսկ պետական ծրագրին կամ օրէնքներուն գործադրութեամբ: Զայ աշակերտին կազմաւորումը աւելին կը պահանջէ:

Թող այլամերժութիւն չթուի հայեցի մթնոլորտի պահպանման մեր պնդումը: Զայ դպրոցին դերը լուսարձակի տակ առնելու կարիք կա՞յ կրկին:

Յուսահատի՞լ ուրեմն ներկայ պայմաններուն լոյսին տակ: Թիւի նօսրացումը երբեմն կը նպաստէ որակի բարելաման: Նուազ թիւով դասարանները իտեալական կրնան ըլլալ, մեծաթիւ ուսուցիչներու ալ չեն կարօտիր: Աւելին՝ կարելիութիւն կը ստեղծուի բարելաւելու ուսուցման որակը: Եակաւը հաւատք, ծրագիր ունենալն ու գործելն է:

Զայերէնաւանդ ուսուցիչներու տագնապը երգելու փոխարէն, ուրեմն, լուծումներ որոնենք: Զայագիտական Զիմարկին մեծ դեր վերապահուած է բնականաբար: Այս հիմնարկին կը պարտինք ներկայ մեր հայերէնաւանդ ուսուցիչներու մեծամասնութեան գոյութիւնը: Զիմարկը կարելիութիւն ունի օգտուելու սուրիահայ, հայրենի եւ սփիւռքահայ մեր մտաւորականներու փորձառութենէն ու ներգրաւելու Սուրիոյ տարբեր նահանգներէ ուսանողներ, օգտագործելով նոյնիսկ առցանց ուսման միջոցները: Այսպիսով կարելի է հայերէնաւանդ ուսուցիչներ պատրաստել Սուրիոյ տարբեր նահանգներուն համար՝ զիրենք գործուղելով հայկական վարժարաններ: Իսկ մեր վարժարանները գործ հայթայթելու են հայագիտականի երիտասարդ շրջանաւարտներուն, որպէսզի անոնք, փորձառուներուն կողքին, աստիճանաբար կատարելագործուին:

Այս բոլորին կողքին, հայերէնաւանդ ուսուցիչը պետք է վարձատրել այնքան, որ ան արժանապատիւ կենք ապրի եւ կարիք չունենայ երկրորդական աշխատանք որոնելով իր դասապահերը նուազեցնելու:

Մեր վարժարանները յաւելեալ հայացումի կը կարօտին, իսկ հայացումը լոկ մաղթանքներով իրականանալի գործելաճ մը չէ: Դժգոհելու կամ տարուող աշխատանքներուն զուտ քարոզչական նկարագիր տալու փոխարէն, յաւելեալ ջանք թափենք ու հայագիտութիւն հրամցենք մեր աշակերտներուն:

Բարի ու անփորձանք վերամուտ կը մաղթենք սուրիահայ բոլոր աշակերտներուն եւ լրջագոյն պատասխանատուութիւն ստանձնած տնօրէններուն, կրթական մշակներուն ու դաստիարակներուն:

«Գ.»

-Երկուշաբթի, 2 Սեպտեմբեր 2019-ին, Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը հանդէս եկաւ հաղորդագրութեամբ յայտնելով որ. «Սուրիա գիտնականութիւն կը յայտնէ Լիբանանի ազգային դիմադրութեան խորայն գիտնական խմբակի մը դէմ իրագործած մասնակի գործողութեան համար: Դիմադրութեան գործողութիւնը պատշաճ պատասխան մըն էր Լիբանանի եւ ազգային դիմադրութեան գերիշխանութեանը դէմ խորայնեան շարունակական յարձակումներուն»:



Յաղորդագրութեան մէջ յիշուեցաւ նաեւ, որ «Սուրիա կը վերահաստատէ իր գորակցութիւնը Լիբանանի ազգային դիմադրութեան եւ լիբանանեան բնակիչ, որոնք կողք-կողքի կանգնելով Լիբանանի գերիշխանութիւնը կը պահպանեն եւ իրենց կարելին ի գործ կը դնեն Լիբանանի հողերը ազատագրելու եւ դէմ դնելու տարածաշրջանի լարուածութիւնը սրող խորայնեան յարձակումներուն»:

-Երեքշաբթի, 3 Սեպտեմբեր 2019-ին, «Շամ Թայմ» հաղորդեց, որ Դամասկոսի Միջազգային 61-րդ ցուցահանդէսի Զարիւղի Նախարարութեան տաղաւարին մէջ, Սուրիոյ Զարիւղի եւ Զանքային Զարստութեան Նախարարութեան եւ ռուսական ընկերութիւններու միջեւ պայմանագրեր ստորագրուած է:



Սուրիոյ կողմէ պայմանագիր ստորագրած է Սուրիոյ քարիւղի ընկերութեան ընդհանուր տնօրէն, երկրչփ. Պասսամ Թաամէ, իսկ Ռուսիոյ կողմէ՝ Ֆիլատա ընկերութեան ընդհանուր տնօրէն Օլիք Բերելով եւ Մերքուրի ընկերութեան ընդհանուր տնօրէն Տիմիթի Կրին Բիւն:

Այս առիթով, Սուրիոյ քարիւղի եւ հանքային հարստութեան Նախարար Ալի Դանէմ յայտնեց, որ պայմանագրերը ռուս-սուրիական գործակցութեան արգասիքն են, յատկապէս տնտեսական գետնի վրայ, ինչպէս նաեւ 2018-ին Սուրիոյ Զարիւղի Նախարարութեան եւ Ռուսիոյ Ջերմութի Նախարարութեան միջեւ ստորագրուած ճանապարհային քարտէզին:

-Շարիքայի արդիւնաբերութեան եւ առեւտուրի գրասենեակի Նախագահ Ապտալա Սուլթան Աուէյս յայտնեց, որ Սուրիոյ եւ Արաբական Միացեալ Էմիրութիւններու միջեւ ներդրումային ծրագիրներու համաձայնութիւն գոյացած է, յատկապէս շերմութեւ գիւղատնտեսութեան ոլորտներուն մէջ:



Աուէյս «Ուաթան» թղթակիցին յայտնեց, որ ներդրումներու ծրագիրը առիթ պիտի ընծայէ Արաբական Միացեալ Էմիրութիւններու մասնաւոր հատուածին Սուրիոյ մէջ ներդրում կատարելու, աւելցնելով, որ Դամասկոսի Միջազգային Ցուցահանդէսը մղեց ներդրումային լուրջ քայլեր առնելու:

-Ռուսիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը շեշտեց, որ Մոսկուա կառչած է Իտլիպի մէջ լարուածութեան մեղմացման գօտի ստեղծելու ծրագիրին՝ առ ի գործադրութիւն Սոչիի մէջ Փութինի եւ Էրտողանի Նախորդ տարուան համաձայնութեան:



Յիշենք, որ 27 Օգոստոս 2019-ին, Թուրքիոյ Նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողան Մոսկուա այցելեց եւ հանդիպում ունեցաւ իր ռուս պաշտօնակից Վլատիմիր Փութինի հետ: Կողմերը լուսարձակի տակ առին սուրիական թղթածրարը, յատկապէս Իտլիպի վերջին զարգացումները:

Թուրքիա վերադառնալէն ետք, Էրտողան յայտնեց, որ Փութինի հետ հանդիպումին ընթացքին կարելորած է Իտլիպի դէմ իրագործուող բոլոր յարձակումներուն դադարեցումը: Ան կարելոր համարած է նաեւ Ապթանայի մէջ գոյացած համաձայնութիւններու իրագործումը:

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Զամազգայինի «Նիկոլ Աղբալեան» մասնաճիւղի 35-րդ անդամական ընդհանուր ժողովի Ա. նիստը պիտի գումարուի Կիրակի, 15 Սեպտեմբեր 2019-ին, առաւօտեան ժամը 10:00-ին, ԱՄԺ Տան «Լեւոն Շաւոյ» սրահէն ներս:

Կը խնդրուի մասնաճիւղի բոլոր անդամներուն ներկայութիւնը:  
**Զամազգայինի «Նիկոլ Աղբալեան» Մասնաճիւղի Վարչութիւն**

# Լուրեր Հայաշխարհին

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԶԵՐՔԱԾ Է ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ ՀԱՆԵՆՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ-ԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԿ ԴԱՇԱՆՋԻ ՄԱՍԻՆ ԼՈՒՐԸ

«Արմենիա».- Արտաքին Գործոց Նախարարության մամուլի խոսնակ Աննա Նաղդալեան հերքած է այն տեղեկությունը, որոն համաձայն ԱՄՆ կառավարությանը ՀՀ իշխանություններն պահանջած է Սուրիայի յետս կանչել մարդասիրական առաքելությանը գործուղած խմբակը:

Նաղդալեան Aysor.am-ի հարցումին ի պատասխան ըսած է.

«Մենք բազմիցս հերքած ենք այդ տեղեկությունը: Ներկայիս փորձ



կրկատարող պետական կառույցին կողմէ հերքուած տեղեկությունը վերստին շրջանառութեան մէջ դնել, նոր մակրամասնութիւններով, որոնք նոյնպէս չեն համապատասխաներ իրականութեան, այդպիսով ձեւաւորելով քանի մը մասերէ բաղկացած կեղծ լուր: Սուրիոյ հայ համայնքի անվտանգութեան եւ տրամադրուող աջակցութեան առնչուող հարցերուն անհիմն շահարկումը ներանձնական շահերէ մեկնելով անընդունելի կը համարենք: Կ'ուզեմ պարզապէս ասել ձեզ նաեւ, որ անվտանգութեան ոլորտի մէջ աշխատող գերատեսչությունները եւ անոնց ղեկավարները մշտական խորհրդակցութեան մէջ են տարբեր հարցերու շուրջ, որոնց մասին յաճախ անդրադարձ կը կատարուի այդ գերատեսչություններու ղեկավարներուն կողմէ», յայտնած է Նաղդալեան:

«Արմենիա».- Արտաքին Գործոց Նախարարության մամուլի խոսնակ Աննա Նաղդալեան հերքած է այն տեղեկությունը, որոն համաձայն ԱՄՆ կառավարությանը ՀՀ իշխանություններն պահանջած է Սուրիայի յետս կանչել մարդասիրական առաքելությանը գործուղած խմբակը:

## ԴԱԻԹ ԻՇԽԱՆԵԱՆ. «ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈՂԱԿՈՒՄԸ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՃԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ԲԱՊԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԽԵՅՑ»

ՀՀ-ի Արցախի Կեդրոնական Կոմիտեի ներկայացուցիչ, Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Դաւիթ Իշխանեան «Ապառաժ»-ի հետ զրոյցի ընթացքին, շնորհաւորելով հայ ժողովուրդը ԼՂՀ իրազակման օրուան առիթով, անդրադարձած է նաեւ 1920-ին տեղի ունեցած Շուշիի հայութեան ջարդերուն 100-րդ տարելիցին:

«Ատրպէյճանի մարդատեաց, ցեղասպանական ծրագրերուն վերջ տրուեցաւ 1991 թուականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ինքնավարութիւնը եւ Ատրպէյճանի սանձազերծած պատերազմին Արցախի յաղթանակով: 1920 թուականի Մարտի օրերուն Շուշի կրակի ենթակայ դարձաւ Ատրպէյճանի ժողովրդավարական Հանրապետութեան կանոնադրական եւ գազազած թաթարական ամբոխին կողմէ: Հազարաւոր հայեր կոտորուեցան, ողջ մնացածները իրենց սեփական երկիրին մէջ տարագիր դարձան:



Սոյն արարքով Ատրպէյճանի փորձեց վերջ տալ 1918-ին ստեղծուած Արցախի անկախ պետականութեան: Շուշիի հայութեան ջարդերը անգամ մը եւս ապացուցեցին, որ Ատրպէյճան, անկախ կառավարման համակարգէն, մօտաւորապէս մէկ դար անդադար, հետեւողականօրէն հայաթափման քաղաքականութիւն կը փորձէր վարել:

Համոզուած եմ, որ անհրաժեշտ է պետական մակարդակով յիշատակել սոյն ողբերգական դէպքերուն հարիւրամեակը, օր առաջ ստեղծելով համապատասխան յանձնաժողով»:

Աւելցնենք, որ Շուշիի ջարդերը տեղի ունեցած են 22-26 Մարտ 1920-ին: Թուրքիոյ Հանրապետութեան բանակին եւ անոր աջակցութիւնը ստացող, Արցախի մէջ բնակող թուրքերու (թաթարներու) եւ քրտական առանձին խմբաւորումներու ձեռամբ կազմակերպուած են Շուշի քաղաքի հայ ազգաբնակչութեան կոտորածը, տեղահանութիւնը, գոյքի եւ անձնական ունեցուածքի ոչնչացումը եւ թալանը:

Հայ ազգին հանդէպ կատարուած ոճրագործութեան հետեւանքով Արցախի հայերուն քաղաքական, տնտեսական, մշակութային կեդրոնը հայաթափուեցաւ եւ անելի քան 20.000 հայ սպանուեցաւ:

## ԻՇԽԱՆ ՍԱՊԱԹԷԼԵԱՆ. «ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԹԵԻՐ ԶԿԱՆ, ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԶԿԱՆ, ՀԻՆԵՐ ԵՒ ՆՈՐԵՐ ԶԿԱՆ»

ՀՀ-ի Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթէլեան Yerkir.am-ի հետ ունեցած հարցազրոյցին ընթացքին յայտնեց, որ արտասահմանէն Հայաստանի պատուիրակութիւններու դիմաւորումին եւ աջակցութեան շատ մը աշխատանքներ դաշնակցական կառույցները յաճախ Հայաստանի Գերագոյն Մարմինին հետ համաձայնութեամբ կ'իրագործեն: Սաղաթէլեան անդրադառնալով մամուլի այն հրապարակումին, թէ Դաշնակցութիւնը պառակտումի եզրին է, դիտել տուաւ, որ Նիկոլ Փաշինեանի ԱՄՆ այցելութեան Նախօրէին, Արեւմտեան Ամերիկայի դաշնակցական կառույցը հայ համայնքին հետ հանդիպումը բարձր մակարդակով կազմակերպելու համար ոչ մէկ ջանք խնայած է:

«Մենք մէկ որոշումով կրնանք այդ մէկը դադարեցնել, բայց կ'աշխատինք ի շահ մեր պետութեան: Սոյն որոշումները իբրեւ պառակտում կը դիտարկեն, որովհետեւ Հայաստանի մէջ Դաշնակցութիւնը իբրեւ ընդդիմադիր կ'ընդունուի, իսկ արտասահմանէն ներս Հայաստանի իշխանութիւններուն ջերմ ընդունելութիւն ցոյց կը տրուի, բայց իրականութեան մէջ այդպէս չէ», ըսաւ Իշխան Սաղաթէլեան:

Ան յիշեցուց Դաշնակցութեան բազմաթիւ յայտարարութիւնները, թէ՛ ուր որ Հայաստանի շահը կայ, հայ ժողովուրդին իրաւունքները պաշտպանութեան հարցը կայ, Դաշնակցութիւնը պատրաստ է իր ողջ ներուժով, համահայկական միջոցներով ու Հայ Դատի գրասենեակներով նեցուկ կանգնելու, որովհետեւ Հայ Դատի գրասենեակներու հիմնադրութեան նպատակը հայ ժողովուրդին պաշտպանութիւնն ու Հայ Դատին հետապնդումն է:

Սաղաթէլեան ըսաւ. «Իշխանութիւնները կու գան ու կ'երթան, իսկ հայ ժողովուրդը պիտի շարունակէ մնալ, զարգանալ եւ հզօրանալ. այս առումով մենք մեր պետութեան օգտակար դարձած ենք եւ պիտի շարունակենք նոյն ընթացքը»:

Ան ի գիտութիւն Դաշնակցութեան պառակտումը փափաքողներուն եւ նման լուրեր տարածողներուն, ՀՀ-ի Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչը անգամ մը եւս յայտնեց, որ Դաշնակցութեան մէջ թելեր չկան, Դաշնակցութեան մէջ բաժանումներ չկան, Դաշնակցութեան մէջ հիներ եւ նորեր չկան. «Ի գուր թող չփնտռեն», ըսաւ ան:

Ան շեշտեց, որ Դաշնակցութիւնը 30-է անելի երկիրներու մէջ կազմակերպական միաւորներ եւ տասնեակ հազարաւոր անդամներ ունի, հետեւաբար այլակարծութիւնները բնական են, միշտ եղած են եւ պիտի շարունակեն ըլլալ:

«Դաշնակցութեան ներքին ժողովրդավարութիւնը Հայաստանի մէջ որեւէ այլ կուսակցութիւն չունի», ըսաւ ՀՀ-ի Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթէլեան:

## ՎԱԶՐԱՄ ԲԱԼԱՅԵԱՆ. «ԴԱՇՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ ԴԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՄՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ ԸՆԵՆԻՔՆԵՐ ՈՒՆԻ»

«Ապառաժ».- Արցախի Հանրապետության Ազգային ժողովի փոխնախագահ, ՀՀ-ի Արցախի Կեդրոնական Կոմիտեի անդամ Վահրամ Բալայեան մեկնաբանելով 2 Սեպտեմբերի խորհուրդը ըսած է. «2 Սեպտեմբերը Դաշնակցութեան համար միշտ փառաւոր ու մեծ տօն համարուած է, որովհետեւ դարեր շարունակ բազմաթիւ սերունդներու երազածը վերջապէս իրականացած է, որուն շնորհիւ մենք ունինք երկու հայկական պետութիւններ՝ Արցախի Հանրապետութիւն եւ Հայաստանի Հանրապետութիւն»:



Վահրամ Բալայեան դիտել տուած է. «Մենք կը հաւատանք, որ Դաշնակցութիւնը պետականութեան ամրապնդման համար ընելիքներ ունի: Միայն պետականութիւնը ամրապնդելու, միջազգային ճանաչման գործընթացը աշխուժացնելու միջոցով կրնանք իրականացնել այն տողը երազանքը, որոնք անկախութեան ու պետականութեան համար իրենց կեանքը նուիրած են:

Դաշնակցութիւնը հաւատարիմ է 1988-ի խորհրդանշին՝ Միացեալ Հայաստանի գաղափարին, մենք այդ ճամբով պիտի քալենք ազատ, անկախ, հետագային ճանչցուած երկիր ունենալու համար»:

ԵՇՄԱՐ

# ԳԵՐՄԱՆԻՈՅ ՆԱԽԱԳԱՅԸ «ՆԱՑԻՆԵՐՈՒ ՌՃԻՐ»ԻՆ ՀԱՄԱՐ ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵՑ ԼԵՅԱՍՏԱՆԵՆ...



Ս. Մահսերճեան

«Տորիզը» մրրիկին պատուհասները, Հոնկ Զոնկի ցոյցերը, Եմենի վրայ Նորագոյն յարձակումի մը պատճառած հարիւրաւոր զոհերը, Զալիֆորնիոյ ծովափին պատահած Նաւային արկած մը, Թեքսասի մէջ գործազուրկ զինեալի մը կրակոցներէն ինկած զոհերն ու վիրաւորները, Լիբանան-Իսրայէլ զինեալ միջադէպերը, Միջերկրականի մէջ գաղթականներու փրկութեան աշխատանքները, Գերմանիոյ կարգ մը Նախագներու մէջ ընտրութիւնները, Եւրոպական Միութեան անվտանգութեան փոփոխութիւնները, Եւրոպական Միութեան անվտանգութեան փոփոխութիւնները, Եւրոպական Միութեան անվտանգութեան փոփոխութիւնները... կորսնցուցած են հաշիւը):

Պարզաբայց ըլլալու համար, Վարչաւայի մէջ Նախատեսուած հաւաքը, Նախօրեակին, որոշ արձագանգ գտաւ հայկական մամուլին մէջ. մեկնաբանութիւններ ու բացատրու-

ղէն պատմութիւն է: (Ի դէպ, այսօրուան աշխարհի «մանր պատերազմ»ներուն հետեւանքով գաղթական դարձած է արեւի քան 70 միլիոն հոգի, զոհերուն հաշիւը պահողները... կորսնցուցած են հաշիւը):



Գերմանիոյ օրուան Նախագահը՝ Տոպիմ Կաուք, 2015-ին, Ցեղասպանութեան 100-ամեակին օրերուն հաստատեց, որ Թուրքիա Ցե-

ղիւններ տրուեցան, թէ Նախագահ Փութին ինչո՞ւ Վարչաւայ չ'երթար, վարչապետ Փաշինեան հրաւիրուած է, թէ՛ չէ հրաւիրուած այդ հաւաքին (ան չգնաց, իսկ արտաքին գործոց Նախարարը յայտարարեց, որ հայութիւնը հսկայական Ներդրում ունեցած է հիթլերական Գերմանիոյ դէմ արձանագրուած յաղթանակին մէջ, մասնակցելով խորհրդային բանակին):

\*\*\*

Մեր՝ հայութեան դիտանկիւնէն, Վարչաւայի մէջ տեղի ունեցած յուշահանդէսը չափազանց կարելի էր նշանակութիւն ունեցան, ի շարք այլ բաներու՝ Գերմանիոյ Նախագահ Ֆրանք Վալթըր Շթայնմայրի պատմական մէկ յայտարարութեան պատճառով: Կրնանք խղճի ամենայն հանդարտութեամբ անտեսել այս յուշահանդէսին առիթով ի յայտ եկած բանավեճերը եւ Արեւելք-Արեւմուտք հակաճառութիւնները, սակայն իրաւունք չունինք ցատկելու Գերմանիոյ Նախագահին յայտարարութեան վրայէն: Շթայնմայրը, առանց երկմտելու կամ բառերը ծամծմելու, հիթլերեան յարձակումը որակեց ՌՃԻՐ, այդքանով չբաւականացաւ, այլ ընթացքը ներողութիւն խնդրեց լին ժողովուրդէն՝ այդ ու հետեւող յարձակումներուն հետեւանքներուն համար: (Հաւաքին Ներկայ-բացակայներուն պատկերն ու այլ մանրամասնութիւններ եւս անտեսելի չեն, սակայն մեր դիտանկիւնէն՝ Նուազ շահեկան):

Կ'արժէ ընդգծելով արձանագրել, որ Լեհաստան, հիթլերեան յարձակումին առաջին զոհը ըլլալէ անդին, մէկն է այն երկիրներէն, որոնք մարդկային եւ նիւթական ամենածանր կորուստները ունեցան Նացիներու արշաւանքներուն հետեւանքով, թէեւ անոր կորուստները Նորագոյն աշխարհին մէջ յաճախ Նսեմացումի ենթակայ կ'ըլլան, հրեաներու ողջակիզումը շատ արեւելի մեծ տեղ

կը գրաւէ (այլապէս արդար պատճառներով), իսկ անգլիացիք կը պարծենան, որ գերմանական բանակները չկրցան ոտք դնել կայսերական կղզիին վրայ, թէեւ ոտնատակ ըրած էին պատմական մրցակից՝ հօգ Ֆրանսսան:

Իսրայէլեան մամուլը բնակաւաքար ի՞ր հայեցակէտով արձագանգ եղաւ Շթայնմայրի յայտարարութեան, յիշեցնելով, որ հրեաներն ալ մեծագոյն վնասուողներն էին: Սակայն գիտենք, որ Գերմանիա 70-ական տարիներէն ի վեր այս գիծին վրայ հաշտ վերաբերմունք ունի իր պատմութեան հետ, ընդունած է հրեաներու ցեղասպանութեան մէջ իր մեղքը, նիւթական ու բարոյական հատուցումներ կատարած է:

\*\*\*

Գերմանիոյ օրուան Նախագահը՝ Տոպիմ Կաուք, 2015-ին, Ցեղասպանութեան 100-ամեակին օրերուն հաստատեց, որ Թուրքիա Ցե-



ղասպանութիւն գործած է հայոց դէմ, ակնարկեց կայսերական Գերմանիոյ մեղսակցութեան, ինչ որ գոհունակութեան ալիք մը բարձրացուց հայութեան մէջ (սպասումի մէջ ենք, որ Մերքելի կառավարութիւնը համապատասխան քայլեր որդեգրէ...): Ան չտատանեցաւ «Եղեռն», «ցաւալի դէպքեր» ու նմանօրինակ խուսափողական եզրաբանութիւններու միջեւ, այլ ոճիրը կոչեց իր իսկական անունով՝ ցեղասպանութիւն, որ իրեն հետ կը բերէ հետեւանքներուն ծանրութիւնն ու արդար հատուցման հրամայականը:

Ա. Աշխարհամարտին, իթթիհատական ցեղասպանին դաշնակից պետութեան մէկ ժամանակորդին կողմէ նման հաստատում երկար մեկնաբանութիւններու չկարօտեցաւ, չի կարօտիր Նաեւ հիմա, իսկ Վարչաւայի մէջ Շթայնմայրի կատարած յայտարարութիւնը համապատասխան է իր անցեալին հետ հաշտութեան Գերմանիոյ վարքագիծին, վարքագիծ՝ որ յստակ կը դարձնէ, թէ պետութիւն մը չի կրնար խուսափիլ անցեալի իր սխալներէն ու ոճիրներէն, ո՞վ որ ալ գործած է գաւնոք. կայսերական, Նացի, ատենաւորներէն, Զոհեան կամ այլ վարչակարգեր անբակտելի շարունակականութիւն կը կազմեն, Նացիին գործած ոճիրին պատասխանատու է

Նա՛եւ այսօրուան Գերմանիան, 30 տարի առաջ վերամիացա՛ծ Գերմանիան, որուն Նախագահը չի վարանիր ներողութիւն խնդրելու իր Նախորդներուն ոճիրներուն համար, չ'ըսեր, թէ անոնք գործուած են այլ դիմագիծերով իշխանաւորներու կողմէ, կամ նման հարցերու լուծումը պատմագետներու պէտք է վըստահիլ, դուրս դնել այժմեական հարցերու օրակարգէն (ուշագրաւ է, որ Նացիական հովերը վերստին սկըսած են փչել Գերմանիոյ մէջ եւ այլուր, այլազան պատճառաբանութիւններով...):

\*\*\*

Թուրքին գործած ցեղասպանութեան գոհ՝ պահանջատեր հայութիւնս, ահա թէ ինչո՞ւ պէտք է գոհունակութեամբ ողջունենք Գերմանիոյ Նախագահին սրտբաց խոստովանութիւնն ու ներողամտութեան հայցը: Այս յայտարարութիւնը Նորագոյն հաստատումը կը հանդիսանայ եւ քաղաքական հիմնաքար մը կը դառնայ մեր այն կեցուածքին, որ Թուրքիոյ այսօրուան իշխանութիւնները, Նաեւ թուրք ժողովուրդը այնքան յանցաւոր են ու պատասխանատու՝ ցեղասպանութեան ու հետեւանքներուն, որքան Նոյնիւնք ցեղասպանութիւնը ծրագրած ու գործադրած իթթիհատական կառավարութիւնն ու անոր «մոգական գաւազան»ով շարժող ամբոխները, Նա՛եւ գաւնոք կանխած՝ սուլթանական իշխանութիւնները, որոնք քաջալերանքով՝ խուժանը տանսամեակներ շարունակ աներեւակայելի ոճիրներու դիմեց հայութեան դէմ, ոչնչացուց իր մարդկային տարրական իրաւունքները հետապնդող օսմանահպատակ հայ գանգուածներ, քար ու քանդ ըրաւ հայուն շէնքերը, փճացուց, այսօ՞ր ալ կը շարունակէ փոշիացնել մեր պատմական հողերուն վրայ կերտուած դարաւոր ժառանգութիւնները: Իսկ այս օրերուն, թրքական ու ազերիական բանակներուն միացեալ ռազմափորձերը այլապէս կը յուշեն համաթուրանական հովերը, որոնք Նոր շերտութիւն կ'ապրին Խորհրդային Միութեան փլուզումէն ասդին...:

Բնականաբար Թուրքիոյ կողմէ ոճիրին ճանաչումն ու ներողութեան խնդրանքը առաջին քայլերը պիտի ըլլան մեր հողային եւ այլ արդար պահանջներուն հատուցման ճամբուն վրայ: 28 տարի առաջ իրենց անկախութիւնը վերստին Նուաճած Արցախն ու Հայաստանը, անոնք սեւեռող հայութիւնը չեն կրնար իրենց տաք օրակարգէն դուրս ձգել այս պահանջատիրութիւնը, անոր ի նպաստ չօգտագործել Շթայնմայրի ու նմաններու խոստովանութիւնները, որքան ալ որ հրատապ հարցերով ծանրաբեռնուած ըլլայ մեր «անմիջական օրակարգ»ը:



## ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ՔԱՂՅՐ ՊՏՈՒՂԸ

Վեհան Պարունմեան

Մեզ մէ իւրաքանչիւրը իր կեանքին ընթացքին կը հանդիպի խոչընդոտներու եւ դժուարութիւններու: Ոմանք, տեսնելով այս խոչընդոտները, նպատակ մը կը ճշդեն եւ այդ նպատակին հասնելու կամքն է, որ զիրենք կը մղէ յաղթահարելու խոչընդոտները՝ անքուն գիշերներ լուսցնելով, աշխատասիրութեամբ ու համբերութեամբ տոգորուած:

ԱՔԵ ՃԵՄԱՐԱՆԻ պաքալորիայի առաջնակարգ հետեւեալ աշակերտները ստորեւ կը պատմեն իրենց փորձառութենէն:

### Մէյի Տրմաշ

**«ՆՊԱՏԱԿԻՍ ԳՎԱՍԵԼՈՒ ԾԱՄԱՐՈՒ ՄԵԾ ԴԵՐ ՈՒՆԵՐ ՎԱՐԺԱՐԱՆԱՍ»**

Պաքալորիան ինծի համար վախազդու տարի մըն էր, բայց ես այդ վախը յաղթահարելու համար պետք էր յառաջադէմ ուսանող մը ըլլայի:

Այս դժուար ճամբուն վրայ առանձին ջբալեցի. ընտանիքս միշտ կողքիս էր, իսկ յուսահատութեան պահերուս ընկերներս կը քաջալերէին:

Նպատակիս հասնելու ճամբուն մեծ էր դպրոցին դերը: Ուսուցիչները իրենց լաւագոյնը կու տային, դաստիարակը՝ պրն. Ներսէսը, եղբօր մը նման կ'օգնէր մեզի, որպէսզի յաղթահարենք դժուարութիւնները:

Չեմ կրնար նկարագրել արդիւնքներու յայտարարուած օրուան ուրախութիւնս: Նպատակիս հասած էի ու արդարացուցած թէ՛ ընտանիքիս եւ թէ՛ դպրոցիս ակնկալութիւնները:

Մեզի յաջորդող սերունդին կը յորդորեմ չվախնալ պաքալորիայէն. անկէ աւելի քան ալ դժուար չէ, ինչպէս շատեր կը ներկայացնեն: Կարելորը նպատակիդ հասնելու համար հաստատ քայլերով յառաջանալ է:



### Կիրառ Արնեան

**«ՅԱՆԴՈՒԳՆ ԵՂԻՐ, ԸՆՏՐԷ՛ ԱՊԱԳԱՅ ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ԾԱՄԱՐ»**

Աւարտելով Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարանը, շնորհակալութիւն կը յայտնեմ բոլոր անոնց, որոնք թիկունք կանգնեցան ինծի յատկապէս պաքալորիայի դժուար տարուան ընթացքին եւ օգնեցին, որ հաստատաքայլ երթով անցնիմ այս ճամբէն:

Իւրաքանչիւրս իւրովի պետք է ճշդէ իր նպատակը, առանց ազդուելու այլոց մտքերէն եւ ամբողջ օրը անձնական դասընթացքներով ծանրաբեռնելով: Վարժարանը լաւագոյն ուսուցիչները կ'ապահովէ արդէն, իսկ անոնք որոնք դժուարութիւն ունին կարգ մը նիւթերու ընկալման մէջ, կրնան հետեւիլ միայն տուեալ նիւթերու յատուկ դասընթացքներուն: Ճիշդ չէ անտեսել վարժարանին դերը, այնտեղ տիրող մրցակցութեան առողջ մթնոլորտը շատ դրական, մղիչ ուժ է:

Պաքալորիան կարելոր տարի է, որովհետեւ այդ տարի կ'ուրուագծուի մեր ուսումնական ապագան:

Շրջապատը մեծ ազդեցութիւն ունի աշակերտին վրայ: Ան կրնայ դրական կամ բացասական դեր ունենալ, քաջալեր հանդիսանալ կամ ճնշելով յուսահատեցնել աշակերտը:

Ուստի, սիրելի ընկերներ, ականջ մի՛ տաք յուսահատական խօսքերով ձեզի դիմողներուն, օրը օրին պատրաստեցէք դասերը եւ ձեզի յատուկ ձեւեր որդեգրեցէք պաքալորիայի ծրագիրը սորվելու համար: Միշտ յիշեցէք, որ դաս պետք չէ սորվիլ միայն նիշ ապահովելու համար, այլեւ գիտելիք իւրացնելու համար:



### Էլենա Աւագեան

**«ԱՇԽԱՏԱՆՔԸ Է ՅԱԶՈՐՈՒԹԵԱՆ ՄԻԱԿ ԳՐԱՎԱՆԸ»**

Պաքալորիայի տարին կեանքիս ամենէն դժուար տարիներէն մէկն էր: Բարեբախտաբար լաւ արդիւնքով աւարտեցի զայն:

Միջ ուժնապատակս էր: Մտադրած էի 2300-էն բարձր գնահատանիշ ապահովել: Ամէն անգամ որ տկարանայի կամ յանձնուէի, նպատակս կը մտաբերէի ու կը լծուէի սորվելու հետեւողական աշխատանքի:

Ընտանիքս եւ դպրոցս ամէն ձեւով թիկունք կանգնեցան ինծի: Ուսուցիչներս ոչ մէկ ճիգ խնայեցին իրենց լաւագոյնը տալու համար:

Միակ յորդորը, որ համեստաբար կ'ուզեմ ուղղել այս ծանր բեռը ստանձնողներուն աշխատիլն է: Իւրաքանչիւր աշակերտ աշխատանքով կը հասնի իր ուզածին եւ աշխատանքին համապատասխան արդիւնք կը ստանայ:



### Աւօ Պօղոսեան

**«ԹԵ՛ ՆՊԱՏԱԿԻ ԾՇՂԱԾ ԵՍ, ԱՌԱՅ ՅՈՒՍԱԳՅԱՆՈՒ ԱՇԽԱՏԷ՛... ԿԸ ԳՎԱՍԵԼՈՒ ԱՆՈՐ ԱՆՊԱՅՄԱՆ»**

Ճեմարանէն շրջանաւարտ դառնալով շնորհակալութիւն կը յայտնեմ վարժարանիս, ուսուցիչներուս եւ ընտանիքիս: Վարժարանիս եւ տանս դրական մթնոլորտը օգնեց, որ հետեւողական աշխատանքով աւարտեմ պաքալորիայի ծրագիրը:

Նպատակս ճշդած էի ու քայլ առ քայլ կ'ընթանայի, միշտ ներքին ձայնիս՝ կամքի ուժիս ականջ տալով:

Բաւական արկածներ անցուցի, անգամ մը ձեռքս, ուրիշ անգամ մը ոտքս կտորեցի, բայց այս բոլորը չխանգարեցին ընթացքս: Ամէն օր դպրոց եւ դասընթացքի յաճախելով կանոնաւոր կերպով հետեւեցայ ծրագրին եւ աշխատանքիս պտուղը քաղեցի:

Յաջող տարուան պաքալորիաներուն սրտանց կը մարդթեմ աննահանջ աշխատանք, որովհետեւ ամենէն երջանիկ օրը ձեր աշխատանքին արդիւնքին յայտարարութեան օրն է: Այդ օրը դուք պիտի մոռնաք բոլոր դժուարութիւնները եւ հպարտանաք ձեր աշխատանքով:

## ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԱՆՈՒԷՐ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՄԵՋ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբանութեան մաս կազմող միաբաններ կը ծառայեն թէ՛ Անթիլիասի Մայրավանքէն եւ թէ՛ թեմերէն ներս: Անոնց ծառայութեան վայրն ու բնոյթը, ինչպէս նաեւ ժամանակաշրջանը մնալուն հանգամանք չունին, կը ճշդուին Վեհափառ Հայրապետի տնօրինութեամբ՝ ըստ կարիքի ու յարմարութեան:

Միաբանութեան ծառայութեան դաշտէն ներս հետեւեալ փոփոխութիւններն ու նշանակումները կատարուեցան. -

- Գերշ. Ս. Տիրայր Արք. Փանոսեան երկար տարիներ որպէս մատենադարանապետ ծառայելէ ետք հանգստեան կոչուեցաւ եւ գինք փոխարինեց Գերշ. Ս. Շահան Արք. Սարգիսեան:



- Գերշ. Ս. Մեղրիկ Եպս. Բարիքեան, նշանակուեցաւ «Թռչնոց Բոյն»ի տնօրէն:

- Ամերիկայի Միացեալ Նահանգներու արեւմտեան թեմի Ֆրեզնօ եւ Սան Ֆրանսիսքօ քաղաքներուն մէջ ծառայող Հոգ. Ս. Տաճատ Վրդ. Աշրգեան եւ Հոգ. Ս. Պարոյր Վրդ. Շերնեգեան շուտով պիտի վերադառնան Մայրավանք: Յիշեալ միաբանները պիտի փոխարինեն Հոգ. Ս. Սմբատ Վրդ. Սապունճեան եւ Հոգ. Ս. Աշոտ Արք. Խաչատուրեան:

- Ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդ Հոգ. Ս. Ռուբէն Արք. Նալպաստեան վերադարձաւ Անթիլիասի Մայրավանք, գինք շուտով պիտի փոխարինէ Հոգ. Ս. Լեւոն Արք. Եղիայեանը:

## ԹՐՔԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ԵՒ ՌԻԼԻԸՄ ՍԱՐՈՅԵԱՆԸ

Թրքական «Bianet» թերթի թղթակից, լրագրող եւ վերլուծաբան Սերտար Քորուչուհու իր սիւնակին մէջ անդրադարձած է ամերիկահայ մեծատուն գրող Ուիլիլմ Սարոյեանի կեանքին ու գործունեութեան:

Յօդուածին հեղինակը աշխարհահռչակ գրողին կենսագրութեան անդրադառնալով թիրիմացութիւն մը թոյլ տուած է, որ, սակայն, որոշակի տարածում ունի թրքական շրջանակներուն մէջ ընդհանրապէս: Ըստ այդ տարածում սխալին՝ Ուիլիլմ Սարոյեանի իսկական անունը Արամ է, իսկ մականունը՝ Զարաօղլանեան: Յառաջացած շփոթին պատճառը հաւանաբար այն է, որ 1905-ին հայկական կոտորածէն մազապուրծ Սարոյեաններուն ընտանիքին հետ Պիթիսէն (Բաղէշ) ԱՄՆ-ի Զալիֆորնիա նահանգ գաղթած են նաեւ իր քեռիներուն՝ Զարաօղլանեաններու ընտանիքները:

Քորուչու իր յօդուածին մէջ ուշադրութիւն կը հրաւիրէ Թուրքիոյ մէջ «Սարոյեան» մականունին առնչուող մէկ այլ տարակարծութեան մը վրայ եւս:

« Երբ 2-րդ համաշխարհային պատերազմը ավարտին հասաւ, - կը գրէ Քորուչու, - ԱՄՆ-ի հայկական կոմիտէները իրենց պահանջները կը տարածէին աշխարհով մէկ: «New York Times» թերթին մէջ եւս այդ նիւթով հրատարակուած բաց նամակի մը մէջ կը պահանջուէր ԽՍՀՄ-ին վերադարձնել Կարսը եւ Արտահանը: Իսկ այդ նամակին տակ դրուած ստորագրութիւններուն մէջ «Սարոյեան» մականունով ալ ստորագրութիւն կար»:

Քորուչու կը յիշեցնէ, որ այդ ժամանակ թրքական «Ճումհուրիէթ» թերթը 22 Յուլիս 1945-ի իր համարով գրած է, որ հանրածանօթ հայ գրող Սարոյեան նոյնպէս ստորագրած է յիշեալ նամակին տակ: Սակայն ճշմարտութիւնը պիտի պարզուէր անելի ուշ: Այդ ստորագրողը Ուիլիլմ Սարոյեանը չէր:

Յօդուածին հեղինակը կը վկայակոչէ թուրք լրագրող Տոդան Նատիի՝ 31 Յուլիս 1945-ին հրատարակած «Ամերիկայի Մէջ Զայկական Զարցին Էութիւնը» յօդուածը, ուր կը յիշուի, որ նամակ ստորագրողը Զալիֆորնիոյ մէջ առնետուրով զբաղող մէկ այլ Սարոյեան էր:

«Նատի կ'ըսէր, որ նախ կ'ենթադրուի, թէ Սարոյեան Ամերիկայի մէջ սիրուած հայ գրողը ըլլալու է, մինչդէռ «Ենթադրողը» այն թերթն էր, որ այդ նիւթը սխալմամբ Թուրքիոյ օրակարգ բերած էր»:

Այնուհետեւ կը նշուի, որ Ուիլիլմ Սարոյեան այդպիսի նամակի տակ արդէն իսկ չէր կրնար ստորագրել, քանի որ այդ ժամանակաշրջանին ան ինքնաշարժի մը արկածէն վիրաւորուած եւ հիւանդանոց տեղափոխուած էր:

Յայտնենք, որ գրական հարուստ ժառանգութիւն ձգած Ուիլիլմ Սարոյեանի ստեղծագործութիւնները թարգմանուած են նաեւ թրքերէսի եւ տալազուրուած «Արաս» հրատարակչատան կողմէ:

Աղբիւր՝ **Bianet.org**  
**Ermenihaber.am**



## «ԱՆ ՎԵՐՉԱՅԱՒ ԶԲՕՍԱՆՔ»



Սուրեն Քինյ. Պերթիզեան

Աշխատանքը մը ետք դադարը մարդկային իրաւունք է: Ոչ ոք կ'ուզէ ամանց զբօսանքի գործել: Զանգիստի ժամանակ յատկացնելով մարդը աշխատանքային ծանր վիճակէն դուրս կու գայ, մտատանջող եւ ուժ սպառող խօսակցական նիւթերէն հեռու կը մնայ եւ կրկին աշխատելու պատրաստ կ'ըլլայ: Ուրեմն, զօսանքը միայն աշակերտին վերապահուած չէ, ամէն մարդ դադարի, հանգիստի եւ արձակուրդի կարիքը ունի:

Ամանային արձակուրդը երկար զբօսանք է: Յանկալի եղանակ մը, որուն մասին մտածելն իսկ բաւարար է փոխադրուելու վարդազոյն երազներու աշխարհը: Ժո-

արդիւնքներ, անելին՝ գրաւելու համար պատուաբեր դիրքեր: Բան մը, որ ձգտումով կ'իրագործուի: Ձրգտում ունենալը երազներուն թռիչք կու տայ, գործին՝ եռանդ, յիշողութեան՝ պայծառութիւն, միտքին՝ զգաստութիւն, կամքին՝ անսպառ թափ, ակնկալիքներուն՝ յուսադրութիւն, ծրագիրներուն՝ յաջողութիւն եւ գիտելիքներու շտեմարանին հարստութիւն: Ձգտումը աշխատանքին գօրութեան աղբիւրն է: Բարիին, գեղեցիկին եւ կատարելիին ձգտիլը հաւատարիմ աշակերտին, ընտիր մշակին եւ մշտաբան վերակացուին յատկանշներն է:

Աշխատանք եւ ձգտում: Այս եր-



դովորդային առածը կ'ըսէ « Զամրուած օրերը շուտ կը վերջանան»: Այս խօսքին իրաւացի ըլլալը կընկատուի ամանային արձակուրդի վերջին օրերուն, երբ աշակերտը կ'ընդունի, որ երկար կարծած զբօսանքը կարճատեւ էր եւ հիւստիանքով է վերամուտի հանգրուանին:

Ամանային արձակուրդի շրջանը ամէն մարդ ըստ կարելւոյն փորձեց լաւ անցընել: Ընկերային հաւաքներու ներկայ գտնուողներ եղան, ոմանք պտոյտներու մասնակցեցան, ուրիշներ բանակումի անմոռաց օրեր եւ հաճելի պահեր ապրեցան, միաժամանակ նոր գիտելիքներով զինուեցան եւ նոր փորձառութիւն շահեցան: Շատեր հաւանաբար ընտանեօք տեսարժան վայրեր այցելեցին եւ բնութեան հրաշալիքները վայելեցին:

Վերամուտի առիթով հիմա բոլորս աշխատանքի կը պատրաստուինք: Կեանքը աշխատանքով կը համեմուի, իմաստ կ'ունենայ, արժէք կը ստանայ, պտղատու կ'ըլլայ, ապագայատեսիլ կը դառնայ, եւ կը պայծառանայ:

Աշխատանքը ապրելուն վաւերական արտայայտիչն է, նպատակ հետապնդելուն ուղին է եւ աստուածային շնորհները աճեցնելուն երկարաշունչ ճիգն է: Ուստի, լուրջ աշխատանքով յանձն առնելու եւ մեր պարտականութիւնները, ապահովելու համար գոհացուցիչ

կու բառերը ինքնաբերու մղումով խորհրդածութեան նիւթ կը դարձնեն: Առանց աշխատանքի մեր առօրեան կը վերածուի մահուան մահիճի, գարշահոտ ճահիճի եւ անբնակ տարածութեան մէջ գըտնուող լիճի:

Աշխատանք մը ձգտումով իր հետեւողականութիւնը կը պահէ: Քրիստոս՝ մեր Տէրը ըսաւ. «Կատարեալ եղէք, ինչպէս որ ձեր երկնաւոր Զայրը կատարեալ է» (Մտ 5.48): Այս խօսքերով մեր փրկիչը կատարեալին ձգտելու հրաւեր տուաւ իր հետեւողներուն: Կատարեալին ձգտելով աշակերտը կը սորվի սխալը սրբագրել, ընթացքը վերատեսութեան ենթարկել, դասանիւթը ընկալել, ի պահանջեալ հարկին պրպտումներ կատարել եւ նոր գիտելիքներ ամբարելու համար ճիգ թափել:

Վերամուտին առիթով հայ դպրոցը գրկաբաց կ'ընդունի սիրասուն աշակերտները: «Այլ վերջացաւ զբօսանքը» երգը մանկապարտեզի տարիներուն շատ երգած եւք, հիմա եւս կ'արձագանգէ քաղցրահունչ թարմութեամբ, հայաշունչ առողջանութեամբ, աշխատելու եւ կատարեալին ձգտելու թելադրականութեամբ:

Թող 2019-2020 ուսումնական տարեշրջանը Աստուծոյ օրհնութեամբ ըլլայ բարեյաջող, հեգասահ եւ անփորձանք:

Բարի գալուստ աշակերտներուն:

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

Սուրբոյ Դայ Աւետարանական Դամայնքի Կրթական Խորհուրդը  
2019-2020 դպրոցական տարեշրջանի համար կարիքը ունի՝

1. Տնօրէնի
2. Տեսուչի
3. Դաշուապահի
4. Բարտուղարի
5. Ծառայողի (տնտես հայրիկ- տնտես մայրիկ)
6. Դայերէն, Սրաբերէն, Անգլերէն եւ այլ մասնագիտութեանց ուսուցիչ-ուսուցչուհիներու:

**Թեկնածուները պարտին ունենալ.**

- Դամայնքի անդամական վկայական վաւերացուած ստիպական պետութեան կողմէ:
- Կրթական ձեռնհասութեան վկայագիր կամ երկու եւ անելի տարիներու որեւէ Կարճարանի մէջ դասաւանդման փորձառութիւնը հաստատող վկայագիր:
- Մանկավարժական փորձառութիւն:
- Վարչական աշխատանքներու գիտութիւն, փորձ եւ հմտութիւն:

**Փափաքողները կրնան դիմել Դայ Աւետարանական Կրթական Խորհուրդի գործադարութեան գրասենեակ:**

Սուրբոյ Դայ Աւետ. Դամայնքի  
Կրթական Խորհուրդ  
Դեռածայն՝ 4642450 - 0991 466 602

## ԱՌԱՍՊԵԼՆԵՐՈՒ ՃԱՄԲԱՆԵՐՈՎ-10

### Ո՛վ Կ'արձանագրեր Առասպելները

Գիրք մարդ արարածին մեծագույն գիտերեն մեկն է: Անոր գիտը անկիևնադարձային կետ մը եղաւ մարդկային պատմութեան մէջ: Երբ մարդ արարածը ունեցաւ խօսքը գրաւոր ձեւով փոխանցելու ունակութիւնը, դէմ յանդիման գտնուեցաւ իրեն փոխանցուած բանաւոր ասանդը արձանագրելու եւ գայն յաջորդ սերունդներուն փոխանցելու հրամայականին առջեւ: Թէ ինչպէ՛ս մարդ արարածը սկսաւ գրել՝ երկար պատմութիւն է, սակայն այսօր մենք գիտենք, որ սեպագիր առաջին այբուբենը գտնուած է այժմու Սուրիոյ տարածքի Օլպարիթ հնագիտական կայքին մէջ: Յետակ է, որ Միջերկրական ծովուն արեւելքն ու Միջագետքը եղած են մարդկային քաղաքակրթութեան հնագույն կեդրոններ:




րեն: Այս տարածաշրջանին մէջ ցարդ յայտնաբերուած են տասնեակ հազարաւոր կաւէ սալիկներ, որոնց վրայ արձանագրուած սեպագիր գրութիւնները կը վաւերագրեն իրենց ժամանակի կենցաղն ու ասպնելակերպը:

Չանագան հնագիտական վայրերու մէջ գտնուած են հսկայական գրադարաններ, ուր պահուած սալիկներէն մաս մը մեր առջեւ կը բանան առասպելներու հրաշալի աշխարհը, անոնց միջոցաւ կը ծանօթանանք հնագույն աստուածներուն եւ մարդկային մտքի առաջին թռիչքներուն: Սակայն այլ սալիկներ ունին արեւի կենցաղային ու վաւերագրական բնոյթ, ինչպէս՝ ժամանակագրական արձանագրութիւններ, խաղաղութեան դաշինքներ, նոյն ի ս կ վ ա ճ ա ռ ա կ ա ն ն եր ու «հաշիւի տետրակ»ներ: Այսքան ընդարձակ գրականութիւն անշուշտ որ ունեցած է գինք ծառայողներ, որոնք նուիրուած էին ստեղծագործական ու ընդօրինակութեան աշխատանքներուն: Հնագույն ժամանակներու գրիչները յաճախ կը մնային անանուն: Անոնք կը բաւարարուէին սալիկին աւարտին յիշելով, թէ ո՞ր թագաւորին օրօք կատարուած է ընդօրինակութիւնը եւ ինչ է աղբիւրը: Գրիչները քուրմեր ու ազնուական դասակարգի մարդիկ էին, որոնք կարողութիւն ունէին դպրոց յաճախելու:

Այո, այսքան ընդարձակ գրականութիւն, բնականաբար կ'ենթադրէ դպրոց, ուր կը դասասան-

դուէր այդ բոլորը: Բարեբախտաբար հնագիտական գանազան վայրերու, ինչպէս Նինուէի հռչակաւոր գրադարանին մէջ, գտնուած են սալիկներ, որոնց հեղինակները կը նկարագրեն իրենց դպրոցական առօրեան: Եկէք միասին ակնարկ մը նետենք քա. Գ. հազարամեակի դրոցներուն վրայ, յագեցնելու մեր հետաքրքրութիւնը եւ իմանալու, թէ ինչպիսի՞ կրթութիւն կը ստանային այն մարդիկը, որոնք արձանագրած են մեծագույն առասպելներն ու դիցազնավեպերը: Ծումերական շրջանէն մեզի հասած է սալիկ մը, որ կը կրէ «Ո՛վ Պատանի, Ո՛ւր Կ'երթայիր Երբ Փոքրիկ Էիր» վերնագիրը: Բնաբանը երկխօսութիւն է գրողին եւ դպրոցականի մը միջեւ եւ կը սկըսի նոյն նախադասութեամբ: Գրողը կը հարցնէ պատանիին, թէ ո՞ւր կ'երթար, երբ փոքր էր, ան կը պատասխանէ, որ դպրոց կը յաճախէր, իսկ երբ գրողը կը հարցնէ դպրոցական առօրեային մասին, մեր առջեւ կը պարզուի պատկեր մը, որ այնքան ալ տարբեր չէ այսօրուան դպրոցական առօրեայէն: Այսպէս՝ մեր աշակերտը կը պատասխանէ.

«Ճաշէն ետք սալիկը գոց սորվեցայ, յետոյ բերին նոր սալիկ մը, որպէսզի ընդօրինակեմ վարժութիւններու սալիկին վրայ: Դպրոցէն ետք վերադարձայ տուն, ուր հայրս նստած էր: Ան նայեցաւ վարժութիւններու սալիկին եւ գոց սորվածս ըսի ինձ, որ շատ ուրախացաւ»: Ապա աշակերտը կը նկարագրէ, թէ ինչպէ՛ս տան ծառաները գինք կը ծառայէն եւ թէ ինչպէ՛ս յաջորդաբար մայրը իրեն երկու բաղարջ հաց տալով, կրկին դպրոց կը դրկէ, ուր այս անգամ կը հանդիպի շարք մը ծախողութիւններու: «Ուսուցիչս կարդաց սալիկն եւ ըսաւ. «Կարգ մը բարեք մոռցած ես», եւ գարկաւ գաւազանով: Կոկիկութեան պատասխանատունն ըսաւ. «Ճամբան կը խաղաղիք տարագրութիւններ» եւ գարկաւ գաւազանով: Հանդարտութեան պատասխանատունն ըսաւ. «Ինչո՞ւ առանց հրամանի կը խօսիս» եւ գարկաւ գաւազանով: Հաւաքի պատասխանատունն ըսաւ. «Ինչո՞ւ հաւաքի ատեն թոյլ կը կենաս» եւ գարկաւ գաւազանով: Կարգապահութեան պատասխանատունն ըսաւ. «Ինչո՞ւ առանց հրամանի դուրս կ'ելլես» եւ գարկաւ գաւազանով: Գաւազանի պատասխանատունն ըսաւ. «Ինչո՞ւ» եւ գարկաւ գաւազանով: Ծումերէնի ուսուցիչը ըսաւ. «Ինչո՞ւ մաքուր շումերէն չես խօսիր» եւ գարկաւ գաւազանով: Գիրի ուսուցիչը ըսաւ. «Գիրդ աղտոտ է» եւ գարկաւ գաւազանով: Այսպէս ատենի դպրոցը սկսայ անտեսել պարտականութիւններս, ուսուցիչս սկսաւ ինձմէ դժգոհիլ եւ այլեւս փափաք չուէր ինձի սորվեցնելու գրչութեան արուեստը»: Յուսահատ աշակերտը կը դի-



Յուշիկ Ղազարեան

մէ հօրը եւ կ'առաջարկէ ուսուցիչը հրաւիրել իրենց տունը, պարգաբանելու համար կացութիւնը: Այդպէս ալ կը պատահի: Երբ ուսուցիչը կ'այցելէ մեր աշակերտին տունը, անոր ներկայութեան հայրը կը խընդրէ աշակերտէն վերադարձելու դրոցը սորվածները: Աշակերտը ճարտարութեամբ կը վերադարձնէ բոլոր սորվածները եւ կ'արժանանայ հօր գնահատանքին, իսկ ուսուցիչը կ'ըսէ. «Քանի որ բոլոր խօսածներս լսած ես եւ ականջ դրած խօսքերուս, ուրեմն պիտի շարունակեմ քեզի դասասանդ: Թող Նիպատա դիցուհին (գրչութեան դիցուհին) քու պաշտպանդ ըլլայ: Թող ըլլաս լաւագույն գրողը եւ վարժութիւններդ



ըլլան անթերի: Թող ընկերներուդ մէջ ըլլաս լաւագույնը, աւարտողներուն առաջինը եւ արժանանաս բոլորին յարգանքին: Պիտի աւարտես ուսումը յաջողութեամբ եւ ըլլաս գիտութեան մարդ: Թող քեզ միշտ իր հովանիին տակ առնէ Նիպատան եւ փառաբանուի անոր անունը»:

Այս հետաքրքրական արձանագրութիւնը բաւական բան կը բացայայտէ այդ ժամանակներու դպրոցներուն եւ ուսումնական համակարգին մասին: Սակայն որքան նմանութիւններ կան այսօրուան աշակերտին առօրեային եւ դիմագրաւած մանկավարժական հարցերուն հետ: Աշխատասէր աշակերտը խրտչած էր դպրոցէն՝ ուսուցիչներու

անտեղի խստութեան պատճառով, բայց հօր միջամտութեամբ կը վերագտնէ իր սերը ուսման հանդէպ: Սակայն այլ սալիկի մը հերոսը այնքան ալ բարեյաջող աւարտ չ'ունենար: Հոս պիտի գտնենք նախորդին հակապատկերը՝ ծոյլ աշակերտին առօրեան: Նախորդ սալիկին պէս հոս ալ գրութիւնը կը սկսի հարցումով, բայց այս անգամ հայրն է, որ կը հարցնէ գաւազան, թէ ո՞ւր կ'երթայ, սակայն գաւազան պատասխանը բաւարարեցնող չէ: Երկխօսութենէն կը պարզուի, որ այս պատանին, առտու դպրոցական պայուսակը առած կ'ուղղուի դպրոց, բայց փոխարէնը կը պատի հրապարակը եւ ժամանակ կը վատնէ, իսկ երբ դպրոց երթայ՝ ուսուցիչներուն հարցումներուն չի կրնար պատասխանել: Այնուհետեւ կը գըտնենք հօր բարկութեան արտայայտութիւնները.

«Ո՛վ անառակ որդի, ամբողջ ժամանակս կը վատնեմ վրադ հրսկելով: Ընկերներուս հարցուցի եւ անոնցմէ ոչ մէկուն գաւազան քեզի պէս է: Մտահոգ եմ քեզմով, իսկ դուն այնքան կը գանգատիս, որ այլեւս ես դժգոհ եմ քեզմէ, որովհետեւ դուն քու վիճակդ բարելաւել չես ջանար: Հձգեցի որ եղէկներ շալկես, ինչպէս մեծերն ու փոքրերը կը շալկեն: Հպահանջեցի որ քարաւանդս հետ քալես եւ չդրկեցի քեզ արտին մէջ աշխատելու: Ոչ մէկ օր քեզմէ պահանջեցի ապրուստի համար աշխատիլ: Ահա՛, տարեկիցներդ կ'աշխատին եւ իրենց ծնողներուն կ'օգնեն, որքան կը փափաքէի որ անոնց պէս ըլլայիր: Անոնց ծնողները գիրենք աշխատանքի մղեցին, բայց ես այդ մէկը չըրի: Գիշեր ու ցերեկ քու պատճառովդ կը տառապիմ, իսկ դուն գիշեր ու ցերեկ անբան կը պտտիս փողոցները»:

Առասպելներու աշխարհէն այս կարճ դադարը առնել, նախ անդրադառնալու այն համակարգին, որ նուիրուած էր անմահացնելու մեր սիրելի առասպելներն ու վեպերը, ապա նաեւ յիշելու տարուան այս բարեբեր ժամանակը՝ դպրոցական վերամուտը: Ընթերցելով մեզմէ հինգ հազար տարի առաջ ապրած աշակերտներուն առօրեան, կ'անդրադառնանք, թէ որքան անփոփոխ է մարդկային բնոյթը, որքան նման էր անոնց կեանքը մեր այսօրուան կեանքին եւ ուրեմն որքան այժմեական կը մնան անոնց արծարծած վերնագրերը: Բարի վերամուտ բոլորին:





## Ուսումնակրթական

# ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՌԱԿԱՆ ՄԵՐՕՐԵԱՅ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՒ ՄԱՐՏԱՅՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Խաչիկ Շահինեան

Ուսումնակրթական դժուարութիւններ մեր առօրեայ մտահոգութիւններու շարքին առաջնահերթ տեղ կը գրաւեն: Տիրող կրթական անբարենպաստ իրավիճակի հետեւանքով ծնողներ եւ գաւազներ հաւասարապէս ճգնաժամ կ'ապրին այսօր, թէ՛ ընտանեկան յարկեր եւ թէ՛ կրթօճախներն են:

Պատասխանատու թէ ժողովրդային մակարդակներու վրայ յաճախ լսած ենք այդ տագնապը բնորոշող բազում տեսակետեր, գործկրթական նոր վերամուտի նախօրեակին պիտի փորձենք համառօտել ու ներկայացնել հետագայ առանցքային կետերու մէջ:

- Աշակերտը կ'ապրի երկարաժամ, միապաղաղ եւ պարտասեցուցիչ գործունեութեամբ յատկանշուած դպրոցական անհանդուրժելի առօրեայ մը: Անոր սպառնալից աշխատանքը կ'ընդգրկէ ամբողջ օրը՝ կը սկսի առաւօտ կանուխ եւ յետմիջօրէի կարճ դադարէ մը ետք կը շարունակուի մինչեւ ուշ երեկոյ: Բեռնաւորուած օրը ան պարտաւոր է անընդէրկու դպրոցներու մէջ՝ կըրթարանէն ներս եւ տունը, անընդհատ դիմակալելով ուսուցիչներու եւ ծնողներու անվերջանալի պահանջներն ու հետապնդումները, գրկուած խաղէ, հաճոյք եւ հետաքրքրութիւն առթող կամ ինքնագործունեութեան մղող որբէ՛ն նախաձեռնութենէ:

- Այս գոյգ դպրոցներուն մէջ աշակերտին ուսուցումը կ'իրակաւանայ տարբեր, երբեմն հակոտնեայ եղանակներով: Ուսուցիչներ կըրթօճախէն ներս դասը կ'աւանդեն կերպով մը, մինչ ծնողներ կամ մասնաւոր դասատուներ նոյն դասը տան մէջ կը բացատրեն բոլորովին այլ ձեւով, տան եւ դպրոցի միջեւ համագործակցութեան եւ աշխատելաճոհի ներդաշնակման բացակայութեան պատճառով: Անշուշտ երկու պարագաներուն ալ երեխան կամ պատանին առհասարակ քիչ բան կ'ըմբռնէ, չըսելու համար, որ ոչինչ կը հասկնայ իրեն մատուցուածէն, բայց կ'ամբնայ ու կը վարանի այս ճշմարտութիւնը խոստովանելու, խուսափելով պախարակութենէ եւ վարկաբեկիչ խօսքերէ, որոնք անխնայօրէն պիտի շռայլուին իր հասցէին ուսուցիչներու եւ ծնողներու կողմէ:

- Աշակերտը եթէ յաջողութիւն արձանագրէ կամ բարձր թիւեր ու գնահատականներ ստանայ, ծնողներ կ'ուրախանան եւ յիշորտանքով կը յայտարարեն՝ թէ իրենց գաւազը ուշիմ, խելացի եւ ջանասէր է, ինչպէս որ իրենք էին: Բայց որբէ՛ն ծախողութեան կամ վատ արդիւնքի պարագային, անոնք կը դժգոհին, կը գայրանան, կը մեղադրեն եւ կրակ

կը տեղացնեն գաւազին գլխուն՝ գայն որակելով բութ, ապուշ, ծոյլ, թուլակամ, անհոգ եւ անպատասխանատու, միանգամայն դժգոյշ ամեն կապ ու նմանութիւն անոր եւ իրենց միջեւ:

Արդեօք ինչպիսի՞ն է գաւազը, խելացի՞, թէ՞ ապուշ, մտացի՞, թէ՞ բութ, ջանասէ՞ր, թէ՞ ծոյլ...:

- Աշակերտը չի գիտեր ինչպէս սորվիլ կամ իւրացնել իր դասերը: Կը սորվի քննութիւններու համար, լոկ յաջողելու նպատակաւ, գերա-

թափանցելու անոնց եութեան:

- Ո՛չ ուսուցիչներ եւ ոչ ալ ծնողներ ծանօթ են աշակերտին պահանջներուն, չեն ճանչնար անոր փնտռածը, անոր համար անհրաժեշտ ու օգտակարը, որովհետեւ ընդհանրապէս պատրաստուած եւ ատակ չեն ուսուցողաստիարակչական աշխատանքի: Նաեւ բնաւ չեն փորձեր սեփական գիտելիքներն ու հնարաւորութիւնները գարգացնել, հարստացնել:

- Մեր կրթարաններու շաբաթական դասացոյցերուն մէջ թէեւ

պակցով միայն: Մինչդէռ հաճոյքով եւ հեշտութեամբ ընկալուածն ու շահուածը կը նկատեն թոյլ, մակերեսային, անհաստատ եւ անհիմն գիտութիւն, որ դատապարտուած է դիւրութեամբ մոռցուելու:

- Դպրոցէն ներս գիտելիքներու եւ ծանօթութիւններու փոխանցումը կը կատարուի չորութեամբ, ոչ-գրաւիչ մեթոտով, մանկական աշխարհին խորթ մթնոլորտի մէջ: Կիրարկուող ուսուցման եղանակները չեն խրախուսեր մանուկներու եւ պատանիներու մօտ նշմարուող որբէ՛ն յուսադրիչ յատկութիւն կամ դրական վարքագիծ: Զոն չենք հանդիպիր բծախղիւր եւ անաչառ արժեւորումներու, ապա առողջ եւ խթանիչ գնահատականներու: Անհրաժեշտ ջանքեր չեն տարուի աշակերտին թաքուն շնորհները, հակումներն ու ընդունակութիւնները յայտնագործելու, յետոյ գայն արդիւնաբար եւ արարիչ աշխատանքի մղելու ուղղութեամբ:

- Մեր վարժարաններու ուսումնառութեան մէջ տիրող է խօսքը՝ միապաղաղ, ճապաղ բացատրողականութիւնը, որ կը յատկանշուի ուսուցիչին մենախօսութեամբ ու տիրակալութեամբ, իսկ աշակերտին կրաւորականութեամբ, ձեռնածալ ունկնդրութեամբ եւ թմբիրով: Աշակերտին նկատմամբ հաւասարակշռուած, ազնիւ եւ հոգածու վերաբերումը կը պակսի, անոր անհատականութիւնը չի յարգուիր, առանձնապատկութիւնները նկատի չեն առնուիր, այլ շեշտուած կարելորութիւն կ'ընծայուի մեծաքանակ գիտելիքներ թխելուն եւ կուտակելուն:

Վերեւ ընդձեռնած մատնանշումները լուրջ մարտահրաւերներ կը հանդիսանան, հրաւիրելով կըրթական մարմիններ եւ պատասխանատուներ անյետաճգելիօրէն վերադասելու ուսումնակրթական մեր կացութիւնն ու ամբողջ գործունեութիւնը՝ իր ծրագիրներով, դասաւանդման կերպերով ու միջոցառումներով, քննութիւններով, դաստիարակչական ուղղութեամբ ու մանաւանդ՝ ապագայ հեռանկարներով:



գանց գնահատանիչեր ապահովելու ակնկալութեամբ, բայց ոչ ճշմարիտ գիտութեան տիրանալու ցանկութեամբ: Իր պարտականութիւններն ու իրմէ պահանջուածը կը կատարէ առանց փափաքելու կամ սիրելու: Այդ պատճառով ալ քննութիւններէ ետք կը մոռնայ իր սորվածներուն մեծամասնութիւնը:

- Դպրոցէն ներս աշակերտը զըրկուած է կենսունակ եւ խրախուսիչ աշխատանքէ, շօշափելի փաստարկներով եւ գործնական միջոցառումներով յագեցած տպաւորիչ եւ կլանիչ ուսուցում: Այնտեղ կը կիրարկուի տեսական, անհրապոյր, հրահրումէ եւ ստեղծագործութենէ գուրկ ընկալունակ դասաւանդութիւն: Մարդոց, կենդանիներու, թռչուններու, ձուկերու, բոյսերու եւ շըրջապատող բազմապիսի իրերու ու երեւոյթներու մասին բաւարար, համոզիչ, ապացուցուած եւ հետաքրքրական գիտելիքներ չեն ջամբուիր: Վարժարանին կողմէ առաջարկուածը հազ ու աղէպօրէն աղերսուած է կենսքին, առօրեային, ընթացիկ հիմնական կարիքներուն: Ուսուցիչներու բացատրութիւններն ու լուսաբանութիւնները առհասարակ կը մասն անխիթական, անշօշափելի, օդին մէջ նետուած վերացական արտայայտութիւններ, որովհետեւ անոնք կը փորձեն աշակերտին սորվեցնել միայն դասագիրքերու մէջ տեղ գտած սահմանափակ գիտելիքներ, առանց ընդարձակելու գաւազը, նաեւ առանց խորանալու կամ

ընդգրկուած են երգի, երաժշտութեան, ձեռարուեստի, գծագրութեան եւ մարմնակրթանքի յատկացուած պահեր, սակայն դպրոցէն ներս աշակերտը երգել, նուագել կամ գծել, քանդակել չի սորվիր, ձեռարուեստը գրեթէ ջնջուած է իր ծրագրէն, իսկ մարմնամարզի դասերը կանոնաւոր եւ հետեւողական ընթացքով տեղի չեն ունենար:

- Անտանելի է աշակերտին վիճակը: Այլեւս զգուած եւ յփացած է առանց կամենալու անհասկնալի բաներ սորվել, յոգնած է ու խորշած՝ առանց մտածելու թութակի նման կրկնել իրեն համար անբովանդակ ու անօգտակար թութացող խօսքեր ու գիտելիքներ, գործ կը պարտադրուին անոր ուսուցիչներու եւ ծնողներու կողմէ: Երեքներ համոզուած են, որ գիտելիքը կը դրոշմուի մարդու յիշողութեան մէջ անընդմէջ կրկնելով, եւ թէ՛ իրաւ ուսումը կը ստացուի մեծ ճիգերով, դժուարութեամբ, ցաւով ու տառա-

**ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐՈՒ ԿԱՐԻՔ**

**Ազգ. Միացեալ Նախակրթարանը 2019-2020 ուսումնական տարեշրջանին համար կարիքը ունի.**

- 1.- Անգլերէնի դասատուի**
- 2.- Ինքնաշարժի վարիչի**
- 3.- Ինքնաշարժի աշակերտութեան հսկող ուսուցչուհիի**
- 4.- Տնտեսուհիի**

**Յետաքրքրուողները կրնան իրենց դիմումագիրքերը ներկայացնել վարժարան մինչեւ 23 Օգոստոս 2019:**

*Հոգաբարձութիւն  
Ազգ. Միացեալ Վարժարանի*





## ՄՏԱՄԱՐԶԱՆԲ



ԽԱԶԲԱՌ (ՄՆ 310)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

**Հորիզոնական**

- 1- Հարսին քրոջ ամուսինը: Սերտ, ամուր:
- 2- Արական անուն: Տառի մը անունը: Տարածքի միաւոր:
- 3- Հայ գրող, որուն բուն անունն է Միքայէլ Յովհաննէսեան: Հակառակ՝ ալիւրի, պանիրի մանր որդ:
- 4- Թումանեանի ծննդավայր գիւղը: Ապակեայ նուրբ շիշ:
- 5- Քէն: Գրական ստեղծագործութիւն: Հարցական դերանուն:
- 6- Ձայնանիշ: Հակառակ՝ 5401:
- 7- Հակառակ՝ տառի մը անունը: Աւանդ, պատգամ: Յոգնակերտ մասնիկ:
- 8- Տառի մը անունը: Բայական լծորդութիւն: Հակառակ՝ իրարայաջորդ տառեր: Թունաւոր օձ մը:
- 9- Ծննդավայր: Ձայնանիշ: Եկեղեցի:
- 10- Սպառող կրակի ձայն:
- 11- Կրկնուած բաղաձայններ: Աւտորալիոյ մայրաքաղաքը:
- 12- Մոզայիկ: Կենդանիէ քաշուած կառք:

**Ուղղահայեաց**

- 1- Գարբիէլ Սունդուկեանի կատակերգութիւններէն:
- 2- Արաքս գետի անուանումներէն: Նշանաւոր շատակերը:
- 3- Հակառակ՝ իգական անուն: Կրկնուած բաղաձայններ:
- 4- Իշխանական բնակարան: Բազմացում, գարգացում:
- 5- Հակառակ՝ կարծր քար մը:
- 6- Յուցական դերանուն: Եւս: Հակառակ՝ դաշտ:
- 7- Լեցուն: Աղբիւր: Արգելական:
- 8- Հակառակ՝ արդի: Մածուկ:
- 9- Շրջապատել: Ֆրանսայի քաղաքներէն:
- 10- Գրաբար՝ օր: Լեզուով մը՝ այր:
- 11- Հակառակ՝ թաքուն պայթուցիկ: Երկբարբառ: Հակառակ՝ իրարա-յաջորդ տառեր:
- 12- Հաստատական: Զիթին տակէն թերթէ ժպտիլ:

**ՊԱՇՏՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ**

Ս. Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ Թաղականութիւնը կա-րիքը ունի.

\* Լուսարարի

\* Մաքրութեան պաշտօնէայի

Հետաքրքրուողները կրնան դիմել Եկեղեցւոյ քարտուղարութեան:

Հեռ. - 2113424

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**

Մեր ժողովուրդի զաւակներուն ուրախութեամբ կը տեղեկացնենք թէ Ս. Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցին բաց կը պահէ իր դռները ամէն օր առաւօտեան ժամը 8:30-էն մինչեւ կէսօրուան ժամը 1:30:

Հեռաձայն. - 2113424 - 2124268

Facebook - Սրբոց Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցի

Պատրաստեց Մարինա Զիւլքըշեան-Պողիկեան

**ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 309)**

Տեղաւորէ՛ (1-9) թուանշանները (9x9) քառակուսիներուն մէջ այնպէս, որ իւրաքանչիւր հորիզոնական եւ ուղղահայեաց տողի մէջ, ինչպէս նաեւ (3x3) տուփիկի մէջ մէկ անգամ արձանագրուին:

	3		1	7		6		
		8				2	4	
2	6			9		4		
	7			1			2	
		5		2			3	9
3	2					6		8
				3	8		1	

**ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌ (ՄՊ 80)**

Գերզ Էմիլի բանաստեղծութիւնները շնչելով գտէ՛ք պահուած բառը: Պահուած բառը 7 տառերէ կը բաղկանայ եւ կը ներկայացնէ Էմիլի բանաստեղծութիւններէն մէկը:

ի	լ	ա	ւ	ա	գ	ո	յ	ն	ը
ո	մ	գ	ի	մ	ա	ն	ւ	մ	
ւ	ձ	ն	ի	վ	ա	ն	ք	ն	է
ե	ի	ո	վ	շ	մ	ե	ծ	ա	ց
ս	ւ	յ	ա	իւ	ե	ն	ք	ը	պ
ա	ն	ն	ր	ա	ր	ր	ա	պ	ը
պ	ը	ո	ք	ւ	ք	ի	ն	ն	ւ
ր	հ	ի	ն	ա	ն	ո	ւ	ն	ը
ե	ն	ա	մ	ա	կ	ի	ն	ք	ո
լ	ս	ր	տ	ի	ս	ի	ն	չ	է

«Աղօթք», «Երդում», «Մասիս Լեռան Առջէս», «Ռազմի Զայլերգ», «Նգովք», «Ծանօթ Բնակար», «Ինքս՝ Ինձ», «Մօրս», «Թէ Գիտէիր», «Ո՛ր Ես, Պապիկ»

**ԼՈՒԾՈՒՄՆԵՐ**

ԽԱԶԲԱՌ (ՄՆ 309)


	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 308)

5	1	7	3	8	9	2	4	6
8	4	6	1	2	5	9	3	7
2	3	9	6	7	4	5	1	8
9	8	5	4	6	2	1	7	3
3	7	4	9	5	1	8	6	2
1	6	2	7	3	8	4	5	9
6	5	8	2	4	3	7	9	1
7	2	1	5	9	6	3	8	4
4	9	3	8	1	7	6	2	5

ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌ (ՄՊ 79)

Պահուած բառը՝ «Վերջերգ»



Սոնա Տեր Պողոսեան-Տարաքճեան

ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

ԽՈՅ



Որոշ շրջան մը ձեր դիմաց բոլոր ճամբաները փակ պիտի ըլլան: Պէտք է համբերէք: Ստիպուած պիտի ընդունիք ձեզի պարտադրուած բոլոր պայմանները:

ՑՈՒԼ



Վերապահ եղէք այս օրերուն: Դժուարութիւններու պիտի հանդիպիք, բայց լաւատես ու համբերող եղէք: Հանգիստի ժամանակ տրամադրեցէք, որպէսզի ճշուած չգզաք:

ԵՐԿՈՒՐԵԱԿ



Պիտի չկարենաք ազդեցութիւն գործել ձեր շուրջիներուն վրայ: Կերտնացէք միայն ձեր գործին վրայ ու մի՛ տարուիք երկրորդական հարցերով, որոնք օգուտ չեն բերեր ձեզի:

ԽԵՑԳԵՏԻՆ



Դրական փոփոխութիւն մը տեղի պիտի ունենայ ձեր կեանքին մէջ: Այս շրջանին վճռական որոշում մի՛ տաք:

ԱՌԻԾ



Օգտուեցէք դրական առիթէն՝ լուծելու ձեր հարցերը: Գոհացէք ձեր վիճակէն ու փառք տուէք ձեր ստացած բոլոր բարիքներուն համար: Ձեր մէկ բարեկամին անակնկալ այցելութիւնը պիտի ուրախացնէ ձեզ:

ԿՈՅՍ



Ուրախ եւ խոստմնալից պահեր պիտի ապրիք: Հաճելի անակնկալ մը ձեզի կը սպասէ: Ձեր գործերը յաջողութեամբ պիտի աւարտէք ու գնահատական մը պիտի ստանաք:

ԿՇԻՈՔ



Լուսարձակները ձեր վրայ պիտի կեդրոնանան այս շրջանին: Ձեր կեանքին մէջ նորութիւն մը պիտի ուրախացնէ ձեզի: Միշտ յիշեցէք, որ մարդ արարածին միակ զէնքը բարութիւնն է:

ԿԱՐԻԾ



Պիտի աշխատիք ձեր գաղտնիքները պահելու ոչ ոքի բացայայտել զանոնք: Պիտի համակերպիք ձեր կեանքի մէջ տեղի ունեցող փոփոխութիւններուն, որպէսզի խաղաղ ապրիք:

ԱՂԵՂՆԱՌՐ



Դժուարութիւն պիտի ունենաք՝ առողջ պահելու ձեր ընկերային յարաբերութիւնները: Ձեր ծանօթներէն մէկուն թշնամական կեցուածքը պիտի նեղացնէ եւ վիրաւորէ ձեզ:

ԱՅՏԵՂՋԻՐ



Մի՛ կարծէք, որ տեղեկութիւն ունենալը, գիտութիւն ունենալ է, երկուքը բոլորովին տարբեր բաներ են: Պետական ձեր թղթածրարները դասաւորեցէք:

ՋՐՀՈՍ



Մեծապէս պիտի օգտուիք ձեզի տրուած խրատներէն եւ խորհուրդներէն: Պէտք է հանդարտիք ու ձեր ջիղերուն տերը ըլլաք, որպէսզի հնարաւորութիւն ունենաք ձեր հարցերը լուծելու:

ՋՈՒԿ



Անակնկալ հարցեր պիտի ծագին, պէտք է գանոնք լուծէք, որպէսզի անելի չբարդանան: Ճամբորդութիւն մը պիտի կատարէք եւ հաճելի ժամանց պիտի ունենաք ձեր ընկերներուն հետ:

ՃԿՈՒՆ ՈՒՍՈՒՑԻՉԻՆ ԱՌԱՎԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մանկավարժներ վերամուտը դրական լիցքերով դիմաւորելու համար հետեւեալ առաջարկները կը ներկայացնեն ուսուցչական ասպարէզին մէջ նոր մուտք գործած ուսուցիչ-ուսուցչուհիներուն:

- Ինքնավստահ եղէք

Ձեր ուժեղ անհատականութիւնը դրական անդրադարձ պիտի ունենայ աշակերտներուն վրայ: Թոյլ բնատրուածամբ ուսուցչուհին տեղ չունի ներկայ սերունդի դաստիարակութեան գործընթացին մէջ: Ուսուցչուհին պէտք է վստահի իր անձին, իր կարողութիւններուն:



Եթէ ան տատամստ է, դասարանին իր խօսքը կ'ուղղէ յաճախ երկմտանքի արտայայտութիւններով, գիտելիքը փոխանցած պահուն յաճախ գիրքին էջերը կը թերթատէ աշակերտներուն դիմաց, առանց նայելու անոնց աչքերուն եւ յստակ նախադասութիւններով հասցնելու միտքը աշակերտին, չի յաջողիր աշակերտին վստահութիւնը շահիլ:

- Լաւ ծրագրել աշխատանքը նախքան դասարան մտնելը

Ուսուցիչը նախքան դասարան մտնելը անհրաժեշտ է որ լաւապէս սերտած ըլլայ դասաւանդող նիւթին բոլոր մանրամասնութիւնները եւ իր հետ ունենայ օժանդակ նիւթեր:

- Դասաւանդութեան նոր միջոցներու օգտագործում

Ձանձրոյթը ուսանողներու առաջին թշնամին է, որ դասարանին մէջ քառս կը յառաջացնէ: Երբ աշակերտ մը կը քնանայ, ուրիշ մը այլ բանով կը զբաղի, իսկ երրորդ մը կը փորձէ ուսուցչուհին ուշադրութիւնը գրաւել, խօսիլ եւ խեղկատակութիւն ընել, դասաւանդութիւնը կը խանգարուի: Ուստի աշակերտը պէտք է լրջօրէն հետեւի դասին, իսկ սա ապահովելու համար ուսուցիչը այլազան հնարքներու պէտք է դիմէ եւ բոլորին ուշադրութիւնը կեդրոնացնէ դասին վրայ:

պին, իսկ սա ապահովելու համար ուսուցիչը այլազան հնարքներու պէտք է դիմէ եւ բոլորին ուշադրութիւնը կեդրոնացնէ դասին վրայ:

- Մերթ ընդ մերթ գուարճալի պահեր ստեղծել

Կարելի է դասարանէն ներս մերթ ընդ մերթ գուարճալի պահեր ստեղծել, գրուցել աշակերտներուն հետ, հետաքրքրուիլ անոնց հարցերով: Այս մէկը պատճառ կը դառնայ, որ ուսուցչուհին անելի մօտենայ աշակերտին, իսկ աշակերտը կապուի ուսուցչուհին ու լսէ անոր խորհուրդները:

- Շարժուն ներկայութիւն ըլլալ դասարանէն ներս

Ուսուցիչը պէտք չէ դասապահու ամբողջ տեսողութեան նստի, կամ կանգնի գրատախտակին առջեւ դասը բացատրելու համար: Ան պէտք է յաճախ փոխէ իր դիրքը, պատի աշակերտներուն միջեւ եւ մօտենալով անոնց մասնակից դարձնէ գիրքը դասին: Այս մէկը կ'ամրապնդէ ուսուցիչ-աշակերտ կապը եւ կ'օգնէ, որ ուսուցչուհին վերահսկէ դասարանին:

- Օգտագործեցէք խաղերու հնարքը

Դասարանը միշտ աշխույժ վիճակի մէջ պահելու եւ դասաւանդութիւնը հետաքրքրական դարձնելու համար անհրաժեշտ է օգտագործել խաղերով սորվեցնելու ձեւը եւ օգտուիլ համակարգչային խաղերէն յատկապէս, յատուկ պատասխաններ տեղադրելով դասարանին մէջ:

Ուսուցիչը թէ՛ դաստիարակ է, թէ՛ գիտութեան լոյսը աշակերտին փոխանցող, գիտք որպէս տիպար մարդ կերտող նուիրեալ, հետեւաբար ներկայ ժամանակներուն ան օժտուած պէտք է ըլլայ նաեւ տարբեր հմտութիւններով, որպէսզի կերտէ առողջ ու գիտակից սերունդներ եւ դասաւանդութիւնը կիրարկէ հաճելի ու առողջ մթնոլորտի մէջ:

ՈՒՍՈՒՑԻՉ ԸԼԼԱԼ

Ուսուցիչ ըլլալ եւ սորվիլ ուզող ուղեղներէն ներս նոր գիտելիքներ ներմուծել ջանալ փորձե՞ր էք բնաւ



Չաիրաս

Չէք գիտեր ինչ խոր հաճոյք է - կը զգաք Հեղ մը որ համը առիք ՎՆ այրեցա՞ք - Չէք կրնար դիւրաւ պրծիլ ազատիլ Ձեզի ո՞վ ըսաւ ուսուցիչ ըլլաք

Ձեր ու սան կոչուած Այդ փայլուն աչքով դեմքերուն միջեւ Սիրոյ կամուրջ մը կը շինուի տակաւ - Ա՛յ ուրիշ ճամբայ չկայ ձեր առջեւ թակարդը ինկաք Կը դառնաք դառնաք ու նորէն հոն էք

Փորձե՞ր էք բնաւ Նոր գիտելիքներ ներմուծել ջանալ Բան սորվիլ ուզող ուղեղներէն ներս Սիրոյ կամուրջէն անցե՞ր էք բնաւ





Ռաֆֆի Սիլահեան

### ՀԱՅԿԱԿԱՆ

#### «ԱՐԱՐԱՏ-ԱՐՄԵՆԻԱ»Ն ԴՈՒՐՍ ՄԵԱՑ ԵՐՈՒՊԱՅԻ ԼԻԿԱՅԻ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի ֆուտբոլի ախոյեան «Արարատ-Արմենիա»-ն չկրցավ անցնել Եւրոպայի լիգայի խմբային փուլ: Փլեյ-օֆֆի դարձի խաղին հայաստանեան խումբը 1-2 արդիւնքով զիջեցաւ Լիքսեմպուրկի ախոյեան «Թիւթելանտ»-ին: Երկու խաղերուն աւարտին արդիւնքը հաւասար մնաց՝ 3-3: Մրցավարին կողմէ տրամադրուած լրացուցիչ ժամանակշրջանին խումբերը չյաջողեցան կոլ նշանակել, եւ անցան 11 մեթրի հարուածներու, ուր բախտը ժպտեցաւ Լիքսեմպուրկի կազմին: Այսպիսով, «Արարատ-Արմենիա»-ն աւարտեց Եւրոպայի լիգայի իր ելոյթները, իսկ «Թիւթելանտ»-ը երկրորդ տարին անընդմեջ իր երկիրը պիտի ներկայացնէ խմբային փուլի մրցումներուն:



#### ԼԵՌՆ ԶՈՒՖԱԼԱԿԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑ

Յունահռոմեական ոճի ըմբշամարտի Հայաստանի հաւաքականի գլխավոր մարզիչ Լեւոն Զուլֆալակեան հրաժարական ներկայացուց: Այս մասին ան պաշտօնապէս յայտարարեց 27 Օգոստոսին տեղի ունեցած մամուլի ասուլիսին ընթացքին: Լեւոն Զուլֆալակեան Հայաստանի հաւաքականը կը գլխավորէ 1999 թուականէն ի վեր: 20 տարիներու ընթացքին անոր գլխավորած հաւաքականի անդամները դարձան ողորմական խաղերու, աշխարհի, Եւրոպայի ախոյեաններ եւ մրցանակակիրներ: Անկախ Հայաստանի ամենէն արդիւնաւետ մարզիչին օրով Հայաստան 7 անգամ նուաճած է աշխարհի եւ 14 անգամ Եւրոպայի առաջնութեան ոսկի մետալներ:



- Ա. Խմբակ.- Փարիզ Սան Ժերման (Ֆրանսա), Ռեալ Մատրիտ (Սպանիա), Ֆ. Զ. Պրիւժ (Պելճիքա) եւ Կալաթասարայ (Թուրքիա):
- Բ. Խմբակ.- Պայերն Միւնխի (Գերմանիա), Թոթենհամ (Անգլիա), Օլիմպիաքս (Յունաստան), Կարմիր Աստղ Պելկրատ (Սերպիա):
- Գ. Խմբակ.- Մանչեսթըր Սիթի (Անգլիա), Շախտիոր Տոնցք (Ուքրաինա), Տիւսան Զադրեպ (Խրուաթիա) եւ Աթալանթա (Իտալիա):
- Դ. Խմբակ.- Իւվենթուս (Իտալիա), Աթլետիքո Մատրիտ (Սպանիա), Պայեր Լեւերքուզըն (Գերմանիա), Լոքոմոթիւ Մոսկուա (Ռուսիա):
- Ե. Խմբակ.- Լիվըրպուլ (Անգլիա), Նափոլի (Իտալիա), Սալզպուրկ (Աւստրիա), Կենք (Պելճիքա):
- Զ. Խմբակ.- Պարսելոնա (Սպանիա), Պրուսիա Տորթմունտ (Գերմանիա), Ինթեր Միլան (Իտալիա), Սլաւիա Փրակա (Չեխիա):
- Է. Խմբակ.- Չելսի Ս. Փեթերսպուրկ (Ռուսիա), Պենֆիլա (Փորթուկալ), Լիոն (Ֆրանսա), Լայպցիկ (Գերմանիա):
- Ը. Խմբակ.- Չելսի (Անգլիա), Այաքս Ամսթերտամ (Հոլանտա), Վալենսիա (Սպանիա), Լիլ (Ֆրանսա):

#### ՓԱՐԻՉ ՍԱՆ ԺԵՐՄԱՆԸ Կ'ՈՒՅԷ ԶԵՌԶ ԲԵՐԵԼ ԵՐԿՐՈՐԴ ԴԱՐՊԱՍԱԳԱՅ ՄԸ

Ըստ վերջին տեղեկութիւններուն, Սպանիոյ Ռեալ Մատրիտի դարպասապահ Զայլըր Նաւաս մօտ ատենէն պիտի միանայ ֆրանսայի ախոյեան Փարիզ Սան Ժերմանի: Զոստարիքացի կրնայ միակը չըլլալ փարիզեան ակումբի դարպասապահներու դիրքին վրայ: Սպանական Marca-ն՝ վկայակոչելով Cadena SER-ը, յայտնեց որ Փարիզ Սան Ժերմանը կը փափաքի երկրորդ դարպասապահ մըն ալ ունենալ, որ կարենայ մրցակցիլ Նաւասի հետ: Հրապարակուած տեղեկութիւններուն համաձայն, Արեւլա կրնայ տեղափոխուիլ Ռեալ Մատրիտ, իսկ Սեվիլիայի դարպասապահ Սերժիո Ռիքո կրնայ միանալ փարիզեան խումբին:



#### ԻՏԸՆ ՀԱՉԱՐՑ ԵՐՈՒՊԱՅԻ ԼԱՄԱԳՈՅՆ ԽԱՐԱՅՈՂ ԸՆՏՐՈՒԹՅԱՒ

Եւրոպայի ֆուտբոլի դաշնութիւնը անցեալ շաբթուան ընթացքին պելճիքացի Իտըն Հազարտը ըստրեց Եւրոպայի ֆուտբոլի ախոյեանութեան


### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

#### «ՉԵՄՓԻԸՆԶ ԼԻԿ»Ի ՎԻՃԱԿԱԶԳՈՒԹԻՒՆԸ ՄԵՃ ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ

Հինգշաբթի օր Ֆրանսայի Մոնաքօ քաղաքին մէջ տեղի ունեցաւ 2019-2020 տարեշրջանի «Չեմփիընզ Լիկ»ի ֆուտբոլի մրցաշարի խմբակներու մրցումներուն վիճակաձգութիւնը, ուր մասնակից բոլոր խումբերը բաժնուեցան ութը խմբակներու: Սոյն վիճակաձգութեան ուժեղագոյն խմբակը նկատուեցաւ առաջինը, ուր միատեղ գտնուեցան ամենէն շատ տիտղոս նուաճող Ռեալ Մատրիտը եւ Ֆրանսայի բազմակի ախոյեան Փարիզ Սան Ժերմանը: Վիճակաձգութեան պատկերը եղաւ հետեւեալ կազմերով.



լաւագոյն խաղացող: Հազարտ առաջին դիրքը գրաւելով ապահովեց 340 ձայն, անոր յաջորդեց ֆրանսացի Օլիվէ Ժիրոնը՝ 119 ձայնով. Ռեալ Մատրիտի յարձակողական խաղացող Լուքա Եովիչ 94 ձայնով երրորդ դիրքը նուաճեց: Յիշեցք, որ ամառնային փոխադրաշրջանին Իտըն Հազարտ Չելսիէն տեղափոխուեցաւ Ռեալ Մատրիտ փոխան 100 միլիոն եւրոյի:



**ՀԱԼԵՊԻ ԱՉԳԱՅԻՆ ՎԱՐժԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՎԵՐԱՄՈՒՅՁ**



**Ս. ԱՆՆԱՅԻ ՈՒՒՏՏԻ ՕՐԸ ՔԵՍԱՊԻ ՄԵՋ**

Աւանդութեան համաձայն, Եագուպիեցիք Ս. Աննայի ուխտի օրը կը տօնէին ամէն տարի Օգոստոս ամսու Երկրորդ կիսուն՝ Ս. Յովակիմի եւ Ս. Աննայի Տօնին յաջորդող Կիրակին, Գիւտ Գօտույ Ս. Աստուածածնայ Տօնին:

Հակառակ Սուրիոյ քաղաքական պատերազմի աւերիչ իրականութեան, որ պատճառ դարձաւ 2013-ին Եագուպիէի ժողովուրդին տեղահանութեան, Եագուպիեցիք յուսահատեցան, այլ՝ շարունակեցին իրենց ուխտը յիշատակել Ս. Աննայի Տօնը Քեսապի եւ Հալէպի մէջ, ուր կայք հաստատեցին:

Արդարեւ, Կիրակի, 1 Սեպտեմբեր 2019-ին, առաւօտեան ժամը 10:00-ին, Ս. Աննայի ուխտի օրուան առիթով Ս. Եւ Անմահ Պատարագ մատուցուեցաւ Գարատուրանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ներկայութեամբ Եագուպիահայ եւ քեսապահայ հոծ բազմութեան:



Օրուան պատարագիչ քահանան՝ Տէր Նարեկ քնյ. Չերեկեցանը, իր քարոզի աւարտին անդրադարձաւ Ս. Աննայի խորհուրդին եւ մաղթեց, որ յաջորդ տարի Ս. Աննայի ուխտը կատարուի ազատագրուած Եագուպիէի մէջ:

Այս առիթով Ս. Աննա եկեղեցւոյ Թաղական Խորհուրդի ատենապետ Գաբրիէլ Պիթար իր սրտի խօսքը արտասանեց: Ան սրտագին շնորհակալութիւններ յայտնեց Քեսապի ժողովուրդին, Գարատուրանի գիւղապետին եւ գիւղացիներուն, որոնք ազնուութեամբ եւ հիւրասիրութեամբ իրենց դռները բա-



ցին տեղահան եղած Եագուպիեցիներուն, ինչպէս նաեւ խորին շնորհակալութիւններ Բերիոյ Թեմի Առաջնորդներուն, որոնք առիթ ընծայեցին 2014 թուականէն ի վեր Քեսապի մէջ Ս. Աննայի տօնի յիշատակութեան, Նոյնպէս Քեսապի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Թաղական Խորհուրդին, որ աջակից կը դառնայ կազմակերպական աշխատանքին:

Ս. Պատարագի աւարտին, հոգեհանգիստի ընթացքին, հարիսայի օրհնութիւնն ու բաշխումը կատարուեցաւ, ապա Քեսապի ՀՍԸՄ-ի փողերախումբը ներկայացուց փունջ մը ազգային երգեր՝ տօնական մթնոլորտ ստեղծելով:

*Թղթակից*